Հավելված 2
2024 թ-ին
Կնքված N «ԴՏՊ-11414-11018/24 ՀԿԱՐԳ» պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N 1

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» «Փոքրիկ Իշխան» ցերեկային սոցիալական կենտրոն Գավառ |
| Դրամաշնորհի N | *«ԴՏՊ-1141-11018/24 ՀԿԱՐԳ»* |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | *ՀՀ ԱՍՀՆ* |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | *«Հայկական Կարիտաս» ԲՀԿ* |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | *03.01.2024-31.12.2024* |
| Հաշվետու ժամանակահատված | *01.10.2024-30.12.2024* |
| Ներկայացման օր | *23.12.2024թ* |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | *Արփիկ Թամազյան/ծրագրի ղեկավար/* |

## 2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

*Միջոցառման նպատակն. «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների» տրամադրում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան երեխաների ընտանիքում ապրելու և նրանց սոցիալական ներառումն ապահովելու նպատակով զարգացնել երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողությունները ու կյանքի հիմնական հմտությունները, երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրել սոցիալ-վերականգնողական, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ խթանելու երեխաների սոցիալական, կրթական, առողջապահական և ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխելու նրանց մուտքը հաստատություններ և /կամ նրանց սոցիալական մեկուսացումը, ապահովելու ընտանիքի հետ վերամիավորումը՝ նպաստելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ինքնօգնության, ինքնորոշման ու ձեռքբերած հիմնախնդիրները ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը:*

<u>Համառոտ նկարագիր հաշվետու ժամանակահատվածի վերաբերյալ:</u>
Հաշվետու ժամանակահատվածում Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում իրականացվել է երեխաների տվյալների հավաքագրում, կարիքի գնահատում և վերագնահատում:
Պարբերաբար թարմացվել է երեխաների տվյալների բազան և կենտրոն հաճախման գրաֆիկը հիմնված անհատական սոցիալական ծրագրերի հիման վրա:
Օրեկան կենտրոն է հաճախել 25-35 երեխա և մասնակցել են կենտրոնի կողմից իրականացվող ծառայություններին:
Կենտրոնում շահառուներին մատուցվել են հետևյալ ծառայությունները՝

- Սոցիալական
- Հոգեբանական
- Լոգոպեդի
- Մննդի տրամադրում/ ճաշ կենտրոնում
- Խմբավարի
- Անձնական օգնականի
- Խմբակ

Սոցիալ-հոգեբանական աշխատանք է իրականացվել շահառու երեխաների, ծնողների և նրանց ընտանիքի անդամների հետ:
Շահառու երեխաները կենտրոնում զբաղվում են տարաբնույթ թիմային ժամանցային և ինտելեկտուալ խաղերով, փազլներով, սպորտային սեղանի խաղերով ինչպիսիք են շախմատը, շաշկին, սեղանի թենիսը, բոուլինգը: Խաղերը նպաստում են երեխաների ուշադրության, երևակայության, ինտելեկտուալ և ստեղծագործական մտածողության, մտահորիզոնի զարգացմանը ձևավորմանը, նրանք դառնում են ինքնուրույն, կարողանում են միասնական որոշումներ կայացնել, համագործակցել: Այս ամենը նպաստում են նաև երեխաների ճկուն մտքի ձևավորմանը, բարձրացնում է ընդհանուր ինտելեկտը, զարգացնում շահառուների ճկունությունը, շարժումների կոորդինացիան: Խաղերը նպաստում են հայերեն լեզվի ճիշտ կիրառմանը, պահպանմանը, զարգացմանը առօրյա միջավայրում, զարգանում է նրանց լակոնիկ խոսքը:

Երեխաները ցերեկային կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում ապահովվում են ամենօրյա տաք սննդով, հիգիենիկ պարագաներով և գրենական պարագաներով:
Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են միջոցառումներ ըստ նախօրոք մշակված աշխատանքային պլանի: Իրականացվել է տեղեկատվական հանդիպումներ ու միջոցառումներ ծրագրի շահառու երեխաների շրջանում նվիրված Երեխաների իրավունքների իրազեկման բարձրացմանը:
Հաշվետու ժամանակահատվածում շահառու ընտանիքներին տրամադրվել է հագուստի աջակցություն և երեխաները ստացել են ամանորյա նվերներ:

**Աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (տրոհել՝ միջոցառում) շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.**

Երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացման վերաբերյալ արշավ:

2024թ-ի նոյեմբեր ամսվա ընթացքում Հայկական Կարիտաս բարեսիրական ՀԿ-ի Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական խմբի ցերեկային կենտրոնի կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների շրջանակներում իրականացվել է Երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավ, որին ներգրավվել են կենտրոնի 61 շահառու երեխաները: Քանի որ արշավը նաև իրականացվել էր ս/թ մայիս ամսվա ընթացքում, այս երկրորդ իրականացման փուլում ներգրավվել են նաև այն երեխաները, ովքեր չէին ներգրավվել առաջին անգամ:

Արշավի շրջանակներում միջոցառումները իրականացվել են ՀՀ ԱՍՀՆ նախաձեռնությամբ:
Արշավի ընթացքում իրականացված ակցիաները լուսաբանվել են Հայկական Կարիտասի ֆեյսբուքյան հարթակում:

Արշավի ընթացում կենտրոնի բազմամասնագիտական թիմի կողմից իրականացվել են տարաբնույթ ակցիաներ, որոնք ուղղված են եղել երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: Ակցիաները ընթացել են խմբային աշխատանքների միջոցով, օգտագործվել են դիդակտիկ նյութեր, տեղեկատվական պաստառներ և թերթոններ, որպեսզի իրավունքների վերաբերյալ իրազեկումը երեխաների համար լինի առավել մատչելի և հասանելի: Երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավը ընթացել է երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի չորս հիմնաքարային սկզբունքների հիման վրա, որոնք հետևյալն են՝ *առանց խտրականության, երեխայի լավագույն շահ, կյանքի ու զարգացման իրավունք, մասնակցության իրավունք:*

<u>Երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավի ընթացքում կենտրոնի կողմից կիրառված մասնագիտական նյութերի և շահագրգիռ կառույցների հետ իրականացված աշխատանքի նկարագրություն:</u>
Երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավը իրականացնելիս կենտրոնի բազմամասնագիտական թիմը կիրառել և օգտվել է համագործակից կառույցների կողմից տրամադրած մասնագիտական նյութերից.

- ☐ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ: Երեխաների իրավունքների իրազեկման արշավի ընթացում կենտրոնի կողմից կրառվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից հրապարակված և կայքում հասանելի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան:
- ☐ Յունիսեֆ Հայաստան: Երեխաների իրավունքների իրազեկման արշավի ընթացում կենտրոնի կենտրոնի կողմից կրառվել է Յունիսեֆ Հայաստանի կողմից հրապարակված և կայքում հասանելի գրքույկները, որոնցում ներկայացված է Միավորված ազգերի

կազմակերպության (ՄԱԿ) կողմից ընդունված «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան՝ երեխաների համար մատչելի լեզվով: Յունիսեֆ Հայաստանի կայքում առկա երեխաների իրավունքների վերաբերյալ տեղեկատվական նյութերի միջոցով կենտրոնի սաները իրազեկվեցին իրենց իրավունքների մասին:

☐ Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին, որը առկա է Աղյիս հավելվածում:

Ս/թ նոյեմբեր ամսվա ընթացքում երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավը իրականացնելիս կենտրոնը համագործակցել է հետևյալ կառույցների հետ՝

- Գավառի համայնքապետարան
- Գավառի Ուսուցողական կենտրոն
- Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ Երեխայի զարգացման և վերականգնողական կենտրոնի (ԵԶՎԿ) Գավառի մասնաճյուղ
- Հայկական Կարիտասի «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագիր

<u>Իրականացված գործողությունների և ակցիաների նկարագրություն:</u>

➢ **Իրազեկման ակցիա 1: Գործողությունների պլանավորում:** Երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավի գործողությունների պլանավորմանը կենտրոնի բազմամասնագիտական թիմը ներառել է նաև կենտրոնի շահառու երեխաներին: Մտագրոհի միջոցով երեխաները ներկայացրել են իրենց առաջարկները և կարծիքը այն մասին, թե ինչպիսի ձևաչափով են ցանկանում իրականացնել արշավը: Երեխաների հետ համատեղ կազմվել է արշավի իրականացման ժամանակացույցը և գործողությունները:

➢ **Իրազեկման ակցիա 2: Երեխայի իրավունքները:** Երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավի շրջանակներում իրականացվել են տարաբնույթ խմբային աշխատանքներ: Խմբային աշխատանքների ընթացքում կենտրոնի սոցիալական աշխատողների կողմից կիրառվել է Փազլի հավաքում մեթոդը, որի միջոցով երեխաները իրազեկվել են իրենց իրավունքների մասին: Աշխատանքների իրականացմանը աջակցել են նաև կենտրոնի համակարգողը և հոգեբանը: Այս թեմատիկ իրազեկող հանդիպումները իրականացվել են ս/թ նոյեմբերի 8-18-ը ընկած ժամանակահատվածում, տարբեր խմբերի հետ: Ընդհանուր թվով 53 երեխայի շրջանում, որից 29 աղջիկ, 24 տղա իրանացրել են խմբային աշխատանք երեխաների իրավունքների վերաբերյալ և կրառել են Յունիսեֆ Հայաստանի կողմից տպագրված <<Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային: Իրազեկման ակցիայի ընթացքում անդրադարձ է կատարվել հետևյալ հասկացություններին՝

1. Երեխա բառի սահմանումը
2. Մերժենք խտրականությունը
3. Երեխայի լավագույն շահ
4. Իրավունքների իրացում
5. Ընտանիքի աջակցություն՝ երեխայի զարգացմանը զուգընթաց
6. Կյանք, կյանքի պահպանում և առողջ զարգացում
7. Անուն և քաղաքացիություն
8. Ինքնություն
9. Ընտանիքի միասնականություն
10. Արտերկրում գտնվող ծնողների հետ կապի պահպանում
11. Պաշտպանություն առևանգումից
12. Հարգանք երեխայի տեսակետների նկատմամբ
13. Արտահայտվելու ազատություն
14. Մտքի և կրոնի ազատություն
15. Խմբերում ներգրավածություն

16. Անձնական կյանքի պաշտպանություն
17. Տեղեկատվության հասանելիություն
18. Ծնողների պատասխանատվություն
19. Պաշտպանություն բռնությունից
20. Ընտանիք չունեցող երեխաներ
21. Որդեգրված երեխաներ
22. Փախստական երեխաներ
23. Առողջապահության, ջուր, սնունդ, շրջակա միջավայր
24. Հաշմանդամություն ունեցող երեխաներ
25. Երեխայի այլ վայրերում տեղավորվելու որոշումների վերանայում
26. Սոցիալական և տնտեսական օգնություն
27. Սնունդ, հագուստ, անվտանգ կացարան
28. Կրթության հասանելիություն
29. Կրթության նպատակներ
30. Փոքրամասնությունների մշակույթ, լեզու և կրոն
31. Ժամանց, խաղ, մշակույթ, արվեստ
32. Պաշտպանություն վնասակար աշխատանքներից
33. Պաշտպանություն թմրանյութերից, վնասակար դեղանյութերից
34. Պաշտպանություն սեռական շահագործումից
35. Երեխաների առևտրի/ճարտի թրաֆիքինգի կանխարգելում
36. Պաշտպանություն շահագործումից
37. Պաշտպանություն պատերազմական գործողությունների ժամանակ
38. Իրավախախտ երեխաներ
39. Ցուրաքանչյուր որ պետք է իմանա երեխաների իրավունքները

- **Իրազեկման ակցիա 3: Թեմատիկ պաստառների պատրաստում:** Կենտրոնի երեխաները պատկերել են թեմատիկ պաստառներ Երեխայի իրավունքներ թեմայով՝ իրենց պատկերացմամբ գունավորելով կտավները: Թեմատիկ պաստառները փակցվել են կենտրոնում:

- **Իրազեկման ակցիա 4: Երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավի ամփոփիչ միջոցառում:** ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների շրջանակներում Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնի կողմից իրականացվող Երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավի ամփոփիչ միջոցառումը տեղի ունեցավ ս/թ նոյեմբերի 19-ին:
Հայկական Կարիտասի «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագրի հետ համատեղ Գավառի «Փոքրիկ Իշխան» կենտրոնը իրականացրեց Համայնքային ներառական միջոցառում, որի շրջանակներում մասնակից երեխաները ինտերակտիվ խաղի միջոցով իրազեկվեցին Երեխաների իրավունքների կոնվենցիայի և Ներառականության մասին:
Միջոցառումը իրականացվել է Գավառի ուսուցողական կենտրոն ՀՈԱԿ-ում՝ Գավառի համայնքապետարանի աջակցությամբ և թույլտվությամբ: Միջոցառմանը մասնակից կառույցներին կազմակերպության կողմից շնորհվեցին շնորհակալագրեր, նվերներ և մասնակից երեխաներին՝ խրախուսական նվերներ:
Սույն միջոցառմանը մասնակցել են երեխաներ Գավառի «Փոքրիկ Իշխան» կենտրոնից, Գավառի Ուսուցողական կենտրոնից և Արաբկիր ԲԿ-ԵԴԱԻ Գավառի Երեխայի զարգացման

և վերականգնողական կենտրոնից: Ընդհանուր թվով միջոցառմանը մասնակցել է 21 երեխա, որից

- **Գավառի Ուսուցողական կենտրոն- 8 երեխա**
- **Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ Գավառի ԵՋՎԿ- 5 երեխա**
- **Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոն-8 երեխա**

Կենտրոնի համակարգողը միջոցառումը մեկնարկեց հակիրճ անդրադարձ կատարելով ամսվա ընթացքում արշավի շրջանակներում իրականացված իրազեկման ակցիաներին, երեխաների մասնակցությամբ պատրաստված տեղեկատվական թեմատիկ պաստառներին և նախաձեռնության արդիականությանը: Այնուհետև կենտրոնի սոցիալական աշխատողները մեկնարկեցին ինտերակտիվ խաղը, որը նպատակ ուներ թիմային առաջադրանքների և վարժանքների միջոցով բարձրացնել մասնակիցների գիտելիքների մակարդակը երեխաների իրավունքների վերաբերյալ:

Իրազեկման ակցիաների ընթացքում մասնագիտական թիմի կողմից կիրառվել են հետևյալ խմբային վարժանքները և մեթոդները.

- «Իրավունքներ- ցանկություններ» վարժանք
- «Իրավունքների մոլորակը» վարժանք
- «Ու՞մ և ո՞ր իրավունքներն են խախտվել» վարժանք ըստ տրամադրված թեմատիկ նյութի
- «Համապատասխանեցրու՛ իրավունքը բովանդակության հետ» վարժանք
- Մտագրոհ
- Թեմատիկ զրույց
- Տեսաֆիլմի դիտում- քննարկում
- Թեմատիկ փազլների պատրաստում
- Պաստառների պատրաստում:

*Արշավի իրականացման արդյունքում կենտրոնի յուրաքանչյուր երեխա ծանոթացավ իր իրավունքներին:*

**Կամավորների միջազգային օր և երեխաների ներգրավում կամավոր գործողություններում:** Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոնի սաներին ներկայացվել են կամավոր աշխատանքի կարևորությունը, նրանք մշակել ու զարգացրել են իրենց նախաձեռնությունները:
Միջոցառման մասնակիցները սովորել և պատրաստել են իրենց ինքնակենսագրականը, այնուհետև թիմային աշխատանքի արդյունքում կազմվել է թիմի ռեզյումեն, որը ներառում է թիմի անդամների հմտությունները, նախասիրությունները:
Հասակակիցները՝ հասակակիցներին մոդելի հիման վրա կենտրոնի սաները կիրականացնեն իրենց նախաձեռնությունները հաջորդ տարվա ընթացքում: Նախաձեռնող խումբը բաղկացած է 12 երեխայից, որից 2 տղա, 9 աղջիկ:
Հանդիպումը իրականացվել է կենտրոնի համակարգողի կողմից:

**Ամանորյա միջոցառում:** Իրականացվել է ամանորյա միջոցառում, որին մասնակցել է ընդհանուր թվով 86 երեխա: Միջոցառումների ընթացքում իրականացվել են տոնական թիմային վարժանքներ և առաջադրանքներ, որոնք հաղթահարելու միջոցով երեխաները ստացել են հուշանվերներ և կարողացել են գտնել Ձմեռ պապիկի կողմից պատրաստված ամանորյա նվերները: Շահառու երեխաները օգտվել են նաև տոնական հյուրասիրությունից:
Միջոցառումը անցել է շատ ջերմ և ուրախ մթնոլորտում, Ձմեռ պապի հյուրընկալությամբ:

**Աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 7 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները:**

**Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների գնահատված կարիքներ:**

Հաշվետու ժամանակահատվածում Հայկական Կարիտասի Գավառ Փոքրիկ Իշխան ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել 97 երեխայի հետ (որից՝ 48 աղջիկ, 49 տղա):

- Հոկտեմբեր- 85 շահառու
- Նոյեմբեր- 86 շահառու
- Դեկտեմբեր- 86 շահառու

Իրականացվել են շահառու ընտանիքների դիմումների ընդունում, փաստաթղթերի հավաքագրում, կարիքների գնահատում և ԱՍԾ-ների կազմում: Պարբերաբար թարմացվել է և համալրվել է շահառուների անձնական տվյալների բազան:
Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքը ընդհատվել է թվով՝ 11 երեխայի հետ, որից 7 աղջիկ, 4 տղա: Կենտրոն է ընդգրկվել թվով՝ 12 երեխա որից՝ 7 տղա, 5 աղջիկ:

Ըստ եռամսյա ժամանակահատվածում 97 շահառուների շրջանում գնահատված կարիքների, կենտրոնի ԿԴԻՀ երեխաներն ու նրանց ընտանիքները, ովքեր ունեն սոցիալականացման և զարգացման ընթացքը խոչընդոտող զանազան հիմնախնդիրներ, մասնավորապես առանձնացվել են ըստ հետևյալ սոցիալական խմբերի՝

- Միածնող ընտանիքի երեխաներ-10
- Ոստիկանությունում հաշվառված, իրավախախտ երեխաներ- 1
- Սոցիալականացման դժվարություններ ունեցող երեխաներ-4
- Վարքային դժվարություններ ունեցող երեխաներ-2
- Անբարենպաստ, կոնֆլիկտային ընտանիքի երեխաներ-2
- Սոցիալ-տնտեսապես անապահով ընտանիքի երեխաներ-45
- Արցախի հանրապետությունից բռնի տեղահանված ընտանիքի երեխաներ –17
- Հաշմանդամություն և/կամ հատուկ կարիքներ ունեցող երեխաներ-16

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել 67 ընտանիքի հետ: Սոցիալ-հոգեբանական համալիր խորհրդատվություն է իրականացվել թվով՝ 77 ընտանիքի անդամների հետ, որից՝ 67 մայր, հայր 3, տատիկ 6, քույր 1:

Ըստ իրականացված հետազոտության ծրագրի 67 շահառու ընտանիքները պատկանում են հետևյալ տեսակների՝

- Ընդարձակ ընտանիքներ *(երեխաների դաստիարակությանը ներգրավված են տարբեր հարազատներ կամ ընտանիքի մի քանի անդամներ (ծնողներ, զարմիկներ, տատիկներ և պապիկներ և այլն) ապրում են նույն տանը* – 28
- Նուկլեար ընտանքների թիվ (*ընտանիք, որը ստեղծվել է հոր, մոր և նրանց երեխաների կողմից*)- 29
- Միայնակ ընտանիք *(բաղկացած է այն բանից, որ ծնողներից միայն մեկն է ստանձնում ընտանիքի միավորը և, հետևաբար, երեխաների դաստիարակությունը)*- 10

Ըստ գնահատված կարիքների շահառու ընտանիքներից 43-ը ստանում են ընտանեկան նպաստ, գործազուրկ ծնողների թիվը կազմում է 47 ծնող, որից 39 մայր, 8 հայր, աշխատանք ունեցող ծնողների թիվը կազմում է 54 ծնող, որից՝ 30 մայր, 24 հայր, արտագնա աշխատանք ունեցող

ծնողների թիվը կազմում է 13 հայր, հաշմանդամություն ունեցող, անաշխատունակ ծնողների թիվը կազմում է 7 հայր:

**Անհատական սոցիալական ծրագրերով սահմանված և ամբողջությամբ իրականացված միջոցառումներ:**

Սոցիալական աշխատողների կողմից կազմվել և պարբերաբար թարմացվել են փաստաթղթերը, մասնավորապես լրացվել են հետևյալ փաստաթղթերը՝

- Առաջնային տնային այցելության թերթիկ
- Երեխայի կարիքների գնահատում
- Շահառուի և ընտանիքի կարիքների գնահատում
- Շահառուի և ընտանքիի կարիքների վերագնահատում
- Սոցիալական պատմության հավաքագրում
- Գենոգրամի և էկոգրամի կազմում
- ԱՍԾ-ի (միջամտության պլան) կազմում
- Օրագրերի կազմում և թարմացում
- Անհատական սոցիալական աշխատանքի թերթիկի լրացում
- Ընտանիքի անդամի հետ աշխատանքի թերթիկ լրացում
- Ընթացիկ տնային այցելության թերթրիկի լրացում
- Դպրոցայցելության թերթիկի լրացում
- Սոցիալական բնույթի ծառայությունների նվիրաբերության պայմանագրի կնքում
- Անձի տվյալների վերաբերյալ հայտարարագիր

Հոգեբանը կազմվել է հետևյալ փաստաթղթերը՝

- Երեխայի անհատական քարտի լրացում
- Խորհրդատվություն երեխայի հետ
- Խորհրդատվություն ընտանիքի անդամների հետ
- Հոգեբանական աշխատանքի թերթիկ
- Տնայցեր
- Մայրերի ինքնաաջակցման խմբի հետ հանդիպումների թերթիկ

Տնայցեր: Կենտրոնի սոցիալական աշխատողները հաշվետու ժամանակահատվածում իրականացրել են 27 տնայց, որից՝ 10-ը առաջնային հետազոտության տնայցեր և 17-ը ընթացիկ տնայցեր:

Առաջնային տնայցի նպատակն էր հետազոտել ընտանիքի կենսապայմանները, ընտանիքի կազմը, զբաղվածությունը, երեխայի և ընտանիքի առաջնային կարիքները, դուրս բերել երեխայի հետաքրքրությունները, ուսումնական առաջադիմությունը: Առաջնային հետազոտության հիման վրա իրականացվել է կենտրոնի բազմամասնագիտական թիմային քննարկում՝ կենտրոնում շահառուների ընդգրկման նպատակով:

Ընթացիկ տնայցերը իրականացվել են շահառուների կարիքների վերագնահատման նպատակով:

Դպրոցայց: Սոցիալական աշխատողը՝ հոգեբանի հետ համատեղ իրականացվել է դպրոցայց, հանդիպմանը ներկա էր դասվարը: Հանդիպումը նպատակ ուներ պարզել, ստանալ ինֆորմացիա Յ.Տ-ի ուսումնական առաջադիմության, դպրոցում դրսևորած վարքագծի վերաբերյալ: Դասվարին ներկայացվեց ՓԻ կենտրոնում իրականացված աշխատանքը Յ.Տ-ի հետ, ներկայացվեց ինչպիսի ծառայություններից է օգտվում, ինչպիսի ուսումնական դժվարություններ են նկատվում երեխայի մոտ: Դասվարը ներկայացրեց, որ երեխան ունի ուսումնական դժվարություններ, անուշադրություն: Հարց ուղղվեց այն փաստի վերաբերյալ, թե որն է պատճառը, որ ընդգրկված չի ներառական համակարգում և որն է

պատճառը, որ դասերին նստում է միայնակ: Սկզբում ուսուցչուհին պատճառաբանեց, որ երեխան չունի լուրջ խնդիրներ, որոնք որ կխոչընդոտեն ներառական համակարգում սովորելուն, նշեց, որ առաջադեմ է, իսկ միայնակ նստում է քանի որ իր գործողություններով խանգարում է մնացածին, սակայն վերջինս կարգավորել է խնդիրը և Ց.Տ.-ն նստում է առաջին նստարանին: Ուսուցչուհուն ներկայացվեց, որ երեխայի մոտ խնդիրները նկատելի են նաև առանձնացնելով մնացածից փաստում է այն մասին, որ Ց.Տ-ն լիովին համապատասխանում է ներառականությանը, նաև շեշտադրվեց, որ մայրը նույնպես նշում է որ իր երեխայի հետ դպրոցում աշխատեն համապատասխան մասնագետներ, քանի որ խնդիրը տեսանելի է և ունենում են բազում դժվարություններ:
Ուսուցչուհին լսելով դիտարկումները նշեց, որ համամիտ է կենտրոնի մասնագետների հետ, սակայն ունի դժվարություններ հետագա աշխատանքը փաստաթղթավորելու ուղղությամբ:
Պլանավորվեց հետագա աշխատանքը, պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ կներկայանցի խնդիրը ուսուցչական կազմին և երեխային կուղղորդեն գնահատման կենտրոն՝ գնահատում անցնելու նպատակով, ունենա հստակ ախտորոշում և նշվեց, որ եթե դպրոցը քայլեր չձեռնարկի ապա Գավառի ՓԻ կենտրոնի անձնակազմը քայլեր կիրականացնի ի օգուտ երեխայի լավագույն շահի:

<u>Առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատվական և ուղղորդման ծառայություններ:</u>
Կենտրոնի շահառու 1 ծնող ուղղորդվել է Սախարովի անվան մարդու իրավունքների հայկական կենտրոն Գեղարքունիքի մասնաճյուղ, իրավաբանական խորհրդատվության, քանի որ վերջինս դիմել է դատարան ալիմենտ ստանալու համար:

<u>Հանդիպում ծրագրի շահառու երեխաների ծնողների, բնակիչի անդամների հետ:</u> Հաշվետու ժամանակահատվածում հանդիպում է տեղի ունեցել ծրագրի շահառու 8 ծնողների /մայրեր/ երեխաների հետ: Հանդիպման նպատակն էր շահառուների ծանոթացումը միմյանց, ինչպես նաև Փոքրիկ իշխան կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններին, առօրյա գործունեությանը, և գործունեության տարիների ընթացքում իրականացված աշխատանքներին: Հանդիպման ընթացքում կենտրոնի համակարգողի կողմից ներկայացվել է Հայկական Կարիտասի ռազմավարական ուղղությունները, Գավառի ՓԻ կենտրոնի անձնակազմը և մատուցվող ծառայությունների բնույթը, շահառուի և ՓԻ կենտրոնի միջև կնքվող նվիրաբերության պայմանագրի կետերը: Հանդիպումը իրականացվել է կենտրոնի համակարգողի և հոգեբանի կողմից:

<<Պաշտպանողական վարքագիծ>> թեմայով հանդիպումների շարք ծրագրի շահառու երեխաների հետ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի համակարգողը իրականացրել է <<Պաշտպանողական վարքագիծ>> թեմայով հանդիպումների շարք ծրագրի շահառու երեխաների հետ: Ընդհանուր թվով իրականացվել են 4 հանդիպումներ 57 երեխաների մասնակցությամբ, որից 31 տղա, 26 աղջիկ:

Խաղ վարժանքների և դիդակտիկ նյութերի միջոցով ներկայացվել են հետևյալ թեմաները՝

- *Բռնության տեսակները,* բռնության փոխարեն կիրառվող այլընտրանքային տարբերակները: Տեղի է ունեցել իրավիճակների ներկայացում և քննարկում տարբեր տեսանկյուններից: Ներկայացվել են հոգեբանական, սեռական, տնտեսական, ֆիզիկական, անտեսման բռնության/չարաշահման տեսակները ու դրանց կանխարգելման միջոցները, ինչպես նաև մասնակիցները իրազեկվել են կիբեր հափշտակիչների մասին: Հանդիպման մասնակիցները

իրազեկվել են Հայկական Կարիտասի պաշտպանության քաղաքականությանը և բողոքարկման մեխանիզմներին:

- *Պաշտպանողական վարքագծի գործընկերությունները:* Երեխաներին տրամադրվել են տարբեր իրավիճակներ նկարագրող նկարներ, ինչպիսիք են երջանիկ ընտանիքը, ազատ ժամանցը, գիտակցաբար ռիսկային գործողությունը՝ արագընթաց գնացք կամ կառուցել նստելը, բուլինգ: Երեխաները բաժանվել են 4 խմբերի և յուրաքանչյուր խումբ վերլուծել է տվյալ իրավիճակը, դրան բնորոշ զգացմունքները ու հետևանքները:
- *Վաղ արձագանքման նշանները՝* թե ինչպես է մարմինը տեղեկացնում մարդուն, որ ինչ-որ բան այն չէ: Յուրաքանչյուր երեխան մարդուկ է նկարել թղթի վրա, գունավորել է այն և նկարագրել է իրեն բնորոշ վաղ արձագանքման նշանները տարբեր իրավիճակներում: Երեխաները դիտել են կարճառոտ թեմատիկ տեսանյութ և վերլուծել են այն:
- *Անձի անձնական տարածք:* Ներկայացվել են հանրային ու անձնական իրերի և տարածքի տարբերակումը: Արտաքին և ներքին հագուստի տարբերակումը, հանրային և անձնական փաստաթղթերի տարբերությունը:
- *Գաղտնիքներ:* Վտանգավոր և ապահով կամ անվտանգ գաղտնիքների տարբերությունը և դրանց կարևորումը: Իրականացվել է մտագրոհ:
- *Իրավունքների և ցանկությունների տարբերակում:* Իրականացվել է մտագրոհ:
- *Զգացմունքների տեսակները և դրանց տարբերակումը:* Երեխաները դերային խաղի և իրավիճակների օրինակով տարբերակել են հետևյալ հույզերը՝ զայրույթ, ձանձրույթ, շփոթմունք, զզվանք, վախ, ուրախ, երջանիկ, նյարդային նախանձ, բարի, սիրված, մելամաղձոտ, ծանրաբեռնված, հպարտ, տարօրինակ, վիրավորված, ամաչկոտ, շնորհակալ, անհանգիստ, հանդարտ, հաղթանակած, կարոտ:
- *Երեխայի ապահովության ցանցը:* Երեխաները խաղ վարժանքի միջոցով նկարել են ձեռք և հինգ մատերի վրա յուրաքանչյուրը գրել է այն հինգ մարդկանց անունները, ովքեր իրեն վստահում են, հավատում են, միշտ հասանելի են, հոգատար են և ում երեխան միշտ ապավինում է յուրաքանչյուր իրավիճակում: Իրականացվել է նաև լաբիրինթ խաղ, որի միջոցով երեխաները ճանապար են գծել և նկարի հերոսներին կարողացել են հասցնել ապահով եզրակետի: Խաղ-վարժանքները ամփոփվել ու քննարկվել են:
- *Ապահով տարածք:* երեխաները թղթի վրա նկարել են իրենց համար ամենաապահով տարածքը:

Հանդիպումները իրականացվել են դերային խաղի, թեմատիկ նկարների գունազարդման ու վերլուծության, իրավիճակների նկարագրման, մտագրոհի միջոցով:
*Հանդիպման արդյունքում երեխաները իրազեկվեցին բռնության տեսակների մասին, տեղեկացան, որ անվտանգ զգալու իրավունքը դա մարդկային իրավունք է և պատկանում է յուրաքանչյուր մարդու:*

Անհատական սոցիալական խորհրդատվություն իրականացվել է 86 երեխաների հետ: Կենտրոնի երեք սոցիալական աշխատողները իրականացրել են անհատական խորհրդատվություն շահառու երեխաների շրջանում:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Լ. Շահբազյանը անհատական խորհրդատվություն է տրամադրել 31 շահառուի, որից 16 աղջիկ, 15 տղա: Խորհրդատվությունը տրամադրվել է մասնագետի կողմից հաշվետու ժամանակահատվածի հոկտեմբեր ամսին և նոյեմբեր ամսի առաջին շաբաթվա ընթացքում:
  Անհատական խորհրդատվությունները շահառու երեխաների հետ ուղղված են եղել ընտանեկան և միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, կոնֆլիկտայնության նվազեցմանը, անձնական հիգիենայի պահպանմանը, ինքնաճանաչման, ինքնարտահայտման, ինքնավերլուծության, նպատակադրման, օրվա

վերլուծության, հմտությունների, կարողությունների զարգացմանը, սեփական անհատականության բացահայտման և յուրաքանչյուրի անհատականությունը տեսնելու և գնահատելու ունակությունների զարգացմանը, աշխատանքի դերի և կարևության գիտակցմանը, իրավունքների և պարտականությունների փոխկապակցմանը և իրականացմանը, հակասոցիալական վարքագծի կանխարգելմանը: Անհատական աշխատանքները նպաստել են նաև նոր ուսումնական տարվա ընթացքում շահառու երեխաների մոտ ունեցած դժվարությունների հաղթահարմանը: Շահառու երեխաների հետ անհատական աշխատանքները ուղված են եղել նաև Փ· կենտրոնում ունեցած բացակայությունների կարգավորմանը, հաճախման օրերի և խմբակների ճշտակեցմանը: Աշխատանքների ընթացքում դիտարկվել են երեխաների մոտ աշխատանքների արդյունքում արկա փոփոխությունները՝ հուզակամային վիճակը, հաղորդակցման, սոցիալական կապերի ձևավորման ունակությունները, զարգացման մակարդակի համապատասխանությունը՝ տարիքին և սեռին: Խորհրդատվությունների ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները և վարժանքները.

- ✓ անհատական զրույց
- ✓ Շեֆալի ծառերի
- ✓ քարտային աշխատանք
- ✓ Ա. Կոպիտին- Սպոնտան նկարներ
- ✓ Օ. Դեմիտրզ-Նեյրոգրաֆիկա
- ✓ Բ. Թրեյսի- 10 նպատակ
- ✓ օրվա ամփոփում-վարժանք
- ✓ պատկերի թելադրություն

- Կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Դաբաղյանը անհատական խորհրդատվություն է տրամադրել 49 շահառուի, որից 25 աղջիկ, 24 տղա:
Հաշվետու ժամանակահատվածում անհատական խորհրդատվությունները ուղղված են եղել կարիքների գնահատմանը և վերագնահատմանը, գենոգրամի և էկոգրամի, սոցիալական պատմության, միջամտության պլանի կազմելուն: Անհատական խորհրդատվություն է տրամադրվել նաև հետևյալ ուղղություններով. միջանձնային կոնֆլիկտների կարգավորում, կոգնիտիվ ոլորտի զարգացում, էթիկայի և վարվեցողության կանոնների յուրացում, հաղորդակցման հմտությունների զարգացում, մասնագիտական կողմնորոշում, ուժեղ և թույլ կողմերի վերհանում, պարտաճանաչության ձևավորում և այլն:
Խորհրդատվությունների ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները և վարժանքները.
- ✓ անհատական զրույց
- ✓ քարտերի համեմատություն
- ✓ թեմատիկ նկարի պատկերում
- ✓ գրաֆիկական թելադրություն
- ✓ լեգոների միջոցով ուսուցում

- Կենտրոնի սոցիալական աշխատող Ն. Գևորգյանը անհատական խորհրդատվություն է տրամադրել 45 շահառուի, որից 20 աղջիկ, 25 տղա:
Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է անհատական խորհրդատվություն կախված շահառուների մոտ առկա խնդիրներից: Աշխատանքները ուղղված են եղել շահառուների մոտ ինքնագնահատականի բարձրացման, խմբում դրսևորվելու կարողության զարգացմանը, շփման և հաղորդակցման ոլորտի զարգացմանը, կոնֆլիկտայնության զարգացմանը, ագրեսիվության նվազեցմանը, սոցիալականցման դժվարությունների հաղթահարմանը, ընկերասիրության և հանդուրժողականության թեմաներին, նպատակադրման կարողության զարգացմանը, ուսումնական ոլորտում առկա դժվարությունների նվազեցման, բացակայությունների նվազեցմանն ուղղված:

Աշխատանքները նպատակ են ունեցել վերը նշված խնդիրների մասամբ կարգավորմանը և աշխատանքները կրում են շարունակական բնույթ:
Հանդիպումների ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝
- ✓ Հարց ու պատասխան
- ✓ Անձրանոց
- ✓ Մարդուկը
- ✓ Հեքիաթի, պատմվածքների ընթերցում, քննարկում
- ✓ <<Արի լինենք ընկերներ>> անավարտ նախադասությունների մեթոդ

<u>Անհատական սոցիալական խորհրդատվություն ծնողների, ընտանիքի անդամների հետ:</u>
Սոցիալ-հոգեբանական համալիր խորհրդատվություն է իրականացվել 99 ընտանիքի անդամների հետ, որից 4 հայր, 5 տատիկ, 1 քույր, 89 մայր:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Լ. Շահբազյանը անհատական խորհրդատվություն է իրականացվել թվով 27 ընտանիքի անդամի հետ, որից 1 քույր և 1 հայր, 1 տատիկ, 24 մայր: Խորհրդատվությունը տրամադրվել է մասնագետի կողմից հաշվետու ժամանակահատվածի հոկտեմբեր ամսին և նոյեմբեր ամսի առաջին շաբաթվա ընթացքում: Հաշվետու ժամանակահատվածում անհատական խորհրդատվություններ իրականացրել են նաև շահառու ծնողների և ընտանիքի անդամների հետ: Անհատական հանդիպումների նպատակը եղել է նոր ընդգրկվող 11 շահառու ընտանիքիների կարիքների գնահատումը, տեղի է ունեցել սոցիալական բնույթի ծառայությունների նվիրաբերության պայմանագրի կնքում: Աշխատանքների ընթացքում քննարկել են ընտանեկան փոխհարաբերությունները, ընտանիքում առկա կոնֆլիկտների պատճառները, ուղիս են բերվել լուծման ուղիներ: Ծնողների հետ քննարկվել և համաձայնեցվել են շահառուների հաճախման օրերը, ներկայացվել են անհատական և խմբային աշխատանքների բնույթը: Կանխարգելիչ աշխատանքներ են իրականացվել շահառու երեխաների բացակայությունների, հակասոցիալական վարքագծի ցուցաբերմանն ուղղված: Իրականացրել են նաև երեխաների սոցիալական, կրթական, հոգեբանական և առողջապահական կարիքների վերհանում և համապատասխան աջակցության տրամադրում: Աշխատանքները նպատակ են ունեցել շահառու ծնողների ծնողավարման, հմտությունների, կարողությունների ձևավորմանը և զարգացմանը՝ կարևորելով երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները: Տեղի է ունեցել նաև ՓԻ կենտրոնից դուրս գրման դիմումների լրացում:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Դաբաղյանը անհատական խորհրդատվություն է իրականացվել թվով 39 ընտանիքի անդամի հետ, որից՝ 35 մայր 2 հայր, 2 տատիկ: Հաշվետու ժամանակահատվածում շահառու ծնողների հետ իրականացված անհատական խորհրդատվությունները ուղղված են եղել երեխայի և նրա ընտանիքի կարիքների գնահատմանը և վերագնահատմանը, ընտանիքի սոցիալական միջավայրը բացահայտելուն, ծնող-երեխա փոխհարաբերությունների վերհանմանը: Ծնողների հետ անհատական խորհրդատվությունները ուղղված են եղել նաև շահառու երեխաների մոտ առկա վարքային փոփոխություններին, բացակայությունների կանխարգելմանը, հակասոցիալական վարքագծի կանխարգելմանը, ծնողի և երեխայի կողմից Փոքրիկ Իշխան կենտրոնի կարգապահական կանոնների պահպանմանը, երկարաժամկետ բացակայությունների վերաբերյալ դիմումների լրացմանը:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Ն. Գևորգյանը անհատական խորհրդատվություն է իրականացվել թվով 33 ընտանիքի անդամի հետ, որից 30 մայր, 1 հայր, 2 տատիկ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է անհատական աշխատանքներ ընտանիքի անդամների և շահառու ծնողների հետ: Աշխատանքները ուղղված են եղել՝ ծանոթացմանը,

շահառուների պայմանագրերի կնքմանը, երեխաների և ընտանիքի առաջնային կարիքների դուրսբերմանը, շահառուների վարքային դրսևորումների կարգավորմանը, ուսումնական ոլորտում ի հայտ եկած դժվարությունների հաղթահարմանը, քննարկվել են ընտանիքում առկա ֆինանսական դժվարությունները: Ծնողների հետ քննարկվել և ներկայացվել են խնդիրների հաղթահարման քայլերը, ներկայացվել է դրական ծնողավարման քայլերը: Հանդիպումների ընթացքում քննարկվել և հստակեցվել է շահառուների կենտրոն հաճախման գրաֆիկը:

**Երեխայի անհատական քարտի լրացում**: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի հոգեբանը իրականացրել է 12 երեխա, որից՝ 7 տղա, 5 աղջիկ անհատական հոգեբանական քարտի լրացում: Վեր է հանվել երեխաների իմացական և ճանաչողական ոլորտները: Բացահայտվել է երեխայի ուժեղ և թույլ կողմերը, վարքը, շփումը միջավայրում և մի շարք առանձնահատկություններ՝ հուզակամային ոլորտ, վարքային պատճառներ և հետևանքներ:

**Հոգեբանական աշխատանքի թերթիկ** լրացվել է 12 մայրերի հետ, որի նպատակն էր ծնողների հետ համատեղ պարզել երեխայի մոտ եղած հոգեբանական խնդիրները, ինչ ընթացքով աշխատանքը պետք է ընթանա: Թերթիկում նաև նշվում է հետագա արդյունքը:

**Անհատական հոգեբանական խորհրդատվություն** իրականացվել է 71 երեխաների հետ, որից 52 տղա, 19 աղջիկ:
Իրականացվել է անհատական խորհրդատվություն՝ իմացական, ճանաչողական, սոցիալական ոլորտների զարգացման ուղղությամբ՝ վախերի հաղթահարում:
Շփման, հուզակամային ոլորտի, տարիքային առանձնահատկություններից ելնելով, նյարդային լարվածությունների հետ կապված իրականացվել են անհատական խորհրդատվություններ և արթերապիաներ, երեխաների մոտ ստեղծելով խաղաղ և հանգիստ մթնոլորտ:
Արդյունքում հոգեբանը գրանցել է դրական արդյունքներ, երեխաները թերապիաների միջոցով հաղթահարել են տարիքային առանձնահատկություններից ունեցած դժվարությունները, ավազաթերապիայի միջոցով կանխվել է երեխաների մոտ առկա ֆիզիկական և նյարդային լարվածությունները:

**Անհատական հոգեբանական խորհրդատվություն ծնողների, ընտանիքի անդամների հետ**:
Անհատական հոգեբանական խորհրդատվություն իրականացվել է 21 ընտանիքի հետ, որից 19 մայր, 2 հայր: Հանդիպումների ընթացքում քննարկվել են երեխաների մոտ առկա խնդիրներից առաջացած պատճառները: Խնդիրները կապված էին ծնողների և երեխաների հարաբերությունների բերելավմանը, այն որ ծնողը արգելք էր հանդիսանում երեխայի օրինակ նրան հեռախոսից զրկելով, որը պատճառ էր դառնում կոնֆլիկտ առաջանալուն ծնող-երեխա հարաբերությունների միջև: Այս դեպքում ծնողին խորհուրդ է տրվել լինել հանդուրժող, հոգատար, ջերմություն ցուցաբերել երեխայի հանդեպ:
Ծնողների մի մասը անհանգստացած էր երեխաների ուսումնական ոլորտում առկա դժվարություններից,նրանց խորհուրդ տրվեց լինել ավելի հետևողական, հաճախակի կապ հաստատել դպրոցի ուսուցիչների հետ:
Ծնողների հետ քննարկվել է հիպերակտիվություն ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքի մեթոդը, խորհուրդ է տրվել ծնողին գտնել և հետևել պատճառները, ուղեկցվող վիճակները, որոնք դժվարեցնում են երեխայի ուշադրության կենտրոնացումը:

<u>Սոցիալ-հոգեբանական համալիր խորհրդատվություն:</u> Աշխատանքը իրականացվել է երկու մասնագետի կողմից, քննարկվել է խնդիրների պատճառները, խանգարող հանգամանքները, տրվել են լուծումներ հանդիպումների և անայցի միջոցով:

<u>Խմբային աշխատանքներ թիրախ խմբերի հետ</u> իրականացվել են կենտրոնի մասնագիտական թիմի կողմից: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ 6 խմբերը.

<u>1. Սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հիմնարար հմտությունների զարգացման խումբ:</u>

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի սոցիալական աշխատողները և հոգեբանը աշխատել են 4 թիրախ խմբերի հետ, որի շրջանակներում իրականացրել են կյանքի հիմնարար հմտությունների զարգացմանը ուղղված խմբային աշխատանքներ:

Յուրաքանչյուր մասնագետ տվյալ խմբի հետ իրականացրել է թեմայի վերաբերյալ հանդիպումներ:

Հաշվետու ժամանակահատվածում Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման խմբերում ընդհանուր ներգրավված է եղել 42 երեխա:

- ☐ *<u>Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման թիրախ խումբը վարել է կենտրոնի սոցիալական աշխատող Լ. Շահբազյանը:</u> Մասնագետը խմբային աշխատանքը իրականացրել է հաշվետու ժամանակահատվածի հունիսերը ամսվա ընթացքում:*

Խմբում ներառվել են 11 շահառու երեխա՝ 7 աղջիկ, 4 տղա:

Թիրախ խմբում իրականացված աշխատանքների նպատակը. զարգացնել և ձևավորել շահառու երեխաների մոտ կյանքի հիմնարար հմտությունները, մասնավորապես՝ ինքնաճանաչման, ինքնարտահայտման, հույզերի կառավարման, ադապտացման: Իրականացվել են հետևյալ թեմաները՝

- Սոցիալական միջավայրի ձևավորում
- Ինքնաճանաչում, ինքնարտահայտում
- Հուզական ոլորտի կարգավորում

1-ին հանդիպման ընթացքում տեղի է ունեցել ծանոթություն, մասնակիցները բաժանվել են զույգերի անունները մտապահելու համար տեղի է ունեցել գնդակով վարժանք, ինչպես նաև կիրառվել է անունների խաչբառ մեթոդիկան:

Այնուհետև իրականացրել է օդապարիկի նկարում գունավորում՝ խմբային կանոնների, ակնկալիքների, սպասելիքների համաքազրման համար: Վերջում տեղի է ունեցել ինքնանկարի ստեղծում, որը փակցրել է օդապիկի վրա: Արդյունքում տեղի է ունեցել ծանոթություն, սոցիալական ջերմ և հարգալից միջավայրի ձևավորում:

2-րդ հանդիպման ընթացքում տեղի է ունեցել ինքնաճանաչման և ինքնարտահայտմանն ուղղված աշխատանքներ: Այդ նպատակով իրականացվել են <<Սիրում եմ, չեմ սիրում>>, <<Ես այսպիսին եմ, դու այսպիսին>> վարժանքները: Խմբային աշխատանքի ընթացքում իրկանացրել են խաղ վարժանք <<երկու զառ>>՝ մասնակիցները նշված թվերին համապատասխանող հարցերին պատասխանելով ներկայացրել են իրենց նախասիրությունները և պատմել իրենց մասին, արդյունքում ձևավորելով հարգանք սեփական անձի և դիմացինի նկատմամբ:

Ընթացքում իրականացվել են էներջայզերներ՝ <<Հենվիր ինձ վրա>>, <<Նկարում է, պատմում է>>:

<<Հուզական ոլորտի կարգավորում>> թեմայի շրջանակներում <<Հույզերի կախարդական աշխարհ>> սեղանի խաղի միջոցով մասնակիցները ծանոթացել են հույզերի տեսակներին, իրականացրել են տվյալ հույզին բնորոշ դերային խաղ, այնուհետև տարբերակել են դրական և բացասական հույզերը: Տեղի է ունեցել հույզերի արտահայտման, դիմացինի հույզերի հասկացման վերաբերյալ ֆիլմի դիտում և քննարկում:

Իրականացված մեթոդներ և վարժանքներ՝

- ✓ խմբային աշխատանք
- ✓ զրույց քննարկում
- ✓ թղթային աշխատանք
- ✓ ֆիլմի դիտում, քննարկում
- ✓ դերային խաղ
- ✓ անունների խաչբառ
- ✓ Սիրում եմ, չեմ սիրում
- ✓ Ես այսպիսին եմ, դու այսպիսին
- ✓ երկու զառ
- ✓ Հենվիր ինձ վրա
- ✓ Նկարում է, պատմում է

☐ *<u>Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման թիրախ խմբի հետ աշխատանք է իրականացրել կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Դարբինյանը:</u>*

Հաշվետու ժամանակահատվածում խմբում իրականացվել է 6 հանդիպում, որին մասնակցել է 9 երեխա, որից 3 աղջիկ, 6 տղա:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է թվով 6 հանդիպում հետևյալ թեմաների շուրջ

- Կոնֆլիկտի, վեճերի կարգավորում
- Ֆինանսական գրագիտություն

Կոնֆլիկտի, վեճերի կարգավորում թեման իրականացվել է 2 հանդիպման ընթացքում:

1-ին խմբային աշխատանքի ընթացքում շահառուներին տրվել է <<կոնֆլիկտ>> բառի սահմանումը, տրվել է ընդհանուր նկարագիր, քննարկվել են կոնֆլիկտի առաջացման պատճառները, բացասական հետևանքները, կոնֆլիկտային իրավիճակները հաղթահարելու կառուցողական ձևերը: Երկրորդ հանդիպման ընթացքում մասնակիցները ուսումնասիրել են կոնֆլիկտային իրավիճակներում հնարավոր 5 վարքային ռազմավարությունները: Հանդիպման ավարտին ամփոփվել է թեման:

Ֆինանսական գրագիտություն թեման իրականացվել է 2 հանդիպումների ընթացքում: երեխաները ձեռք են բերել տարբական գիտելիքներ ֆինանսական ոլորտում: Ֆինանսական գրագիտությունը ներառում է ծանոթություն այնպիսի ֆինանսական կարևորագույն հմտություններին, ինչպիսիք են ֆինանսների հիմունքներ, բյուջեի կազմում, արժույթների իմացություն և այլն: Աշխատանքի ընթացքում պրակտիկ խմբային վարժանքների, սեղանի զարգացնող խաղերի միջոցով երեխաները ամրապնդել են գիտելիքները ֆինանսական ոլորտում:Իրականացված մեթոդներ և վարժանքներ

- Դերային խաղ <<Հաղթանակ, պարտություն>>;
- Թեստի լրացում
- Խմբային քննարկում
- Մուլտֆիլմի դիտում քննարկում:
- Մտագրոհ
- Պաստառի պատրաստում
- Սեղանի խաղ<<ֆինանսական լոտո>>
- Տեսահոլովակի դիտում քննարկում,

☐ *<u>Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման թիրախ խմբերի հետ աշխատանք է իրականացրել կենտրոնի սոցիալական աշխատող Ն. Գևորգյանը:</u>* Խմբում ներառվել են 11

երեխա, որից 5 տղա, 6 աղջիկ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 2 խմբային հանդիպում, որի ժամանակ քննարկվել են հետևյալ թեմաները՝

- Առաջնորդության ընդհանուր բնութագիրը
- Լսելու հմտություններ

1-ին հանդիպման ընթացքում իրականացվել է խմբային աշխատանք առաջնորդության վերաբերյալ: Հանդիպման նպատակն էր շահառուների մոտ զարգացնել առաջնորդական հմտությունները: Աշխատանքի ընթացքում իրականացվեց թեմատիկ քննարկում, քննարկվեց առաջնորդության ընդհանուր բնութագիրը: Մարդուկը մեթոդի օգնությամբ երեխաներին ներկայացվեց առաջնորդության 3 տեսակները՝ գործնական, տեղեկատվական և հուզական, քննարկվեց օրինակներ:

Հանդիպման ընթացքում կիրառվեց հետևյալ վարժանքները՝

✓ Ինչպես վարվել
✓ Ձնագնդի
✓ Տիեզերական վերաբնակներ

Խմբային աշխատանքը և թեմատիկ վարժանքները նպաստեցեցին շահառուների մոտ՝ առաջնորդական հմտությունների, միմյանց կարծիքը հաշվի առնելու, կարևորը երկրորդականից տարբերակելու, խմբով համատեղ որոշում կայացնելու և եզրահանգումներ անելու հմտությունների զարգացմանը:

2-րդ հանդիպման նպատակն էր շահառուներին օգնել գիտակցել լսելու հմտության կարևորությունը: Հանդիպման թեման էր լսելու հմտությունները:

Հանդիպման ընթացքում իրականացվեց թեմայի ներկայացում. քննարկվեց ակտիվ լսելու 5 գլխավոր քայլերը, բերվեցին քայլերին վերաբերվող օրինակներ: Խմբային աշխատանքի ընթացքում ներկայացվեց ակտիվ լսելու 3 ձևերը՝ դադար, ճշտում, վերապատմում:

Իրականացվեց խաղ-վարժանք <<լսիր, վերարտադրիր>> անվամբ:

☐ *Փոքրի հիմնարար հմտությունների զարգացման թիրախ խմբերի հետ աշխատանք է իրականացրել կենտրոնի հոգեբան Ա. Հակոբյանը:*

Խմբում ներառվել է 11 երեխա, որից 6 տղա, 5 աղջիկ:

Առաջին թեման քննադատական մտածողություն էր: Աշխատանքի արդյունքում մասնակիցները սովորեցին փաստը տարբերել կարծիքից, որ մարդը պետք է հարգի և լսի դիմացինի կարծիքը, առանց կարծիքը վատ համարելու: Կարողանալով սովորական խնդիրները լուծել ճկուն մտածողության միջոցով, քննադատական մտածողության օգնությամբ դառնալով լավատես, իրազեկվել սպառողների կողմից ընկալվող ամեն մի բան:

Երկրորդ հանդիպման թեման եղել է ստեղծագործական մտածողությունը: Երեխաները հասկացան, որ փաստերը ընդդեմ կարծիքների համարվում են ստեղծագործ մտածողություն: <<Բանտարկված գայլը>> հեքիաթի ընթերցումից հետո երեխաները կարողացան վերլուծել և տարբերակել, որն է քննադատական մտածողությունը և որը ստեղծագործական:

Երրորդ թեման ճկունությունն էր: Երեխաները համոզվեցին, որ կյանքում շատ կարևոր է ճկունությունը, և առաջ շարժվել ճկունության հմտություններով: Վարժանքների միջոցով յուրաքանչյուր մասնակից փորձեց ցույց տալ մտքի և կատարած գործողությունների ճկունությունը:

Թեմայից ելնելով զարգացել են երեխաների հոգեբանական և վարքագծային կարողությունները, որոնք թույլ են տալիս հանգիստ մնալ ճգնաժամային իրավիճակներում և դեպքերից դուրս գան առանց երկարատև բացասական հետևանքների:

4-րդ թեման աշխատունակությունն էր: Երեխաները ունեցած գիտելիքներով կարողացան տարբերակել ինչ են ուզում և ինչ պետք է անեն ամենակարևորը կարողանան կառավարվել, որի համար հարկավոր է նկատի ունենալ այն ամենը, ինչ պետք է անեն, տարբերելով այն ամենից, թե ինչ են ուզում անել: Ամեն մի երեխա փորձեց կազմել իր գործողությունների պլանը, որը օգնում է ավելի կազմակերպված գործել:

Հանդիպումների ընթացքում իրականացվել են հետևյալ մեթոդները.
- ✓ խաղ-վարժանքներ
- ✓ դերային խաղեր
- ✓ հեքիաթի ընթերցում

<u>2. Սոցիալական հմտությունների զարգացման խումբը</u> իրականացվել է կենտրոնի սոցիալական աշխատողի և հոգեբանի կողմից: Սոցիալական հմտությունների զարգացման խմբի հիմնական նպատակն է զարգացնել շահառուների սոցիալական հմտությունները: Խումբը բաղկացած է 16 երեխայից, որից 6 աղջիկ, 10 տղա: Իրականացվել է թվով 5 հանդիպում՝

- Քննարկվել են հետյալ թեմաները
- Շփման կանոններ
- Հույզերի կառավարում
- Համբերատարություն
- Ընտանիքի դերը և նշանակությունը, ընտանիքի դերի կարևորումը և գիտակցումը:

Հանդիպումները նպաստեցին երեխաների գիտակցման մակարդակի բարձրմանը, նպաստեցին սոցիալ-հոգեբանական կարողությունների զարգացմանը: Երեխաների պարզ դարձավ ինչ է հույզը, շփումը, համբերատարությունը և ընտանիքի դերը: Հանդիպումների ընթացքում երեխաները ստացան հուսադրող հետանկարներ, անձնական մարմնի մասերը հոգալու, միտքը մարզելու կարիքները և զգացողությունները:
Հանդիպումների ընթացքում կիրառվել են վարժքաներ, դերային խաղեր:

<u>3. Մեդիագրագիտության խումբ:</u> Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է խմբային աշխատանքներ մեդիագրագիտության խմբի հետ, որին մասնակցել է 7 շահառու երեխա՝ 6 աղջիկ, 1 տղա:
Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 5 հանդիպում:
Աշխատանքների ընթացքում ուսումնասիրել և վերլուծել են ինտերնետի գործառույթները, վտանգները, տարբերակել են մուլտիմեդիա, լրագրություն, քաղաքացիական լրագրություն և այլընտրանքային մեդիա հասկացությունները:
Ուսումնասիրել և վերլուծել են ինտերնետային լրատվամիջոցների կայքերը և համեմատել միմյանց հետ, կատարել են ինտերնետային որոնումներ անվտանգ համակարգիչների միջոցով: Ես և մեդիան թեմայի շրջանակներում քննարկվել է թե ինչպես տարբերակել հավաստի տեղեկությունը կեղծից, ուսումնասիրել են առանձին կայքերը, Google խորացված որոնում, Նկարների հետադարձ որոնում /Reverse image search:
Դասընթացների ընթացքում իրականացվել են նաև անհատական աշխատանքներ օգագործելով ստացված գիտելիքները, հմտությունները և կարողությունները, որպես գրագետ մեդիա սպառող:
Խմբի ամփոփումը տեղի է ունեցել սլայդ շոուների ներկայացմամբ և <<Մեդիամարտ>> համկլվածի խաղերով: <u>https://media.am/mediabattle/</u>

<u>4. Բանավեճի խումբ:</u> Խմբին մասնակել է 6 երեխա/ աղջիկ:
Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 1 հանդիպում բանավեճի խմբում, որի ընթացքում տեղի է ունեցել բանավեճ հետևյալ թեմայով. <<Արդյոք աշակերտները պետք է կրեն դպրոցական համազգեստ, թե ոչ>>: Բանավեճի ընթացքում մասնակիցները դրսևորեցին խմբի ընթացքում ձեռք բերված գիտելիքները և հմտությունները: Վերջում ամփոփվեցին իրականացված աշխատանքները, երեխաների ձեռքբերումները և գրանցած հաջողությունները:

<u>5. Ֆիլմախաղ:</u> Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի երկու սոցիալական աշխատողների կողմից իրականացվել են խմբային աշխատանքեր խմբի հետ: Խմբում ներառված են եղել 17 շահառու երեխա, որից 8 տղա և 9 աղջիկ:

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել 2 ֆիլմդիտում-քննարկում:
- Հարի փոթեր. փիլիսոփայական քարը
- Զվերոպոլիս

3-րդ հանդիպման ընթացքում երեխաները խաղացել են սեղանի խաղ կարմիր խաչ: Խաղի ընթացքում ձեռք են բերել գիտելիքներ առաջին օգնության, տեխնածին աղետների և վտանգավոր բնական երևույթների ընթացքում վարքականոնների վերաբերյալ:

<u>6. Արտթերապիայի խումբը</u> իրականացվել է կենտրոնի հոգեբանի կողմից:
Արթերապիան իրականացվել է 2 խմբով, 1-ին խմբին մասնակցել են 6 երեխան, որից՝ 2 աղջիկ, 4 տղա, իսկ 2-րդ խմբին մասնակցել են 17 երեխա, որից 6 աղջիկ,11 տղա:
Իրականացվել է թվով 10 հանդիպում:
Հանդիպումների նպատակն էր երեխաների մոտ ստեղծել հոգեբանական, հուզական կայունություն, անկաշկանդ և անշահախնդիր շփում պարզ մոտիվացիաներով: Հանդիպումների արդյունքում երեխաները ձեռք են բերել ինքնավստահություն, վեր են հանել իրենց ուժեղ և թույլ կողմերը, նվազեցվել են վախերը, նյարդային և դյուրագրգիռ դրսևորումները: Զարգացել են մասնակիցների վերլուծական և ստեղծագործական միտքը: Հանդիպումների ընթացքում իրականացվել են արտթերապիայի հետևյալ տեսակները՝

- ✓ Նկարչաթերապիա
- ✓ Երաժշտաթերապիա
- ✓ Պարային թերապիա
- ✓ Ավազաթերապիա
- ✓ Ֆիլմի դիտում
- ✓ Հեքիաթաթերապիա

<u>Լոգոպեդական ծառայություն/ խոսքային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայություններ</u>: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են համապատասխան աշխատանքներ լոգոպեդական աջակցության կարիք ունեցող երեխաների աջակցությունը արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:
Ուսումնասիրվել են երեխաների անամնեստիկ տվյալները, բացահայտվել են խոսքային խանգարումները: Յուրաքանչյուր երեխայի համար մշակվել է հեռանկարային զարգացման պլան: Երեխայի կարիքին համապատասխան անցկացվել են անհատական պարապմունքներ, կիրառելով տարբեր մեթոդներ:

Լոգոպեդական աշխատանքի ընթացքում 15 երեխայի, 9 տղա, 6 աղջիկ հետ աշխատանքի ընթացքում կիրառվել են հետևյալ 3 մեթոդները:
- **Գործնական մեթոդներից** են վարժությունները, խաղերը, հաղորդակցման իրավիճակների մոդելավորումը:
- **Զննական մեթոդներից** են դիդակտիկ նյութերը, դիտումը, ունկնդրումը:
- **Բառային մեթոդներից** են խոսքային նյութերը, պատմվածքները, զրույցը, ընթերցանությունը:

Մասնագետի կողմից կազմվել և լրացվել են հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

- ✓ Խոսքի հետազոտման քարտ
- ✓ Լոգոպեդի առաջնային գնահատման թերթիկ ձևաթուղթ
- ✓ Հաղորդակցման մատրիցա

<u>Լոգոպեդի կողմից իրականացվող անհատական աշխատանք/խորհրդատվություն երեխաների հետ</u>: Համագործակցելով կենտրոնի մասնագիտական թիմի հետ կազմվել է աշխատանքային գրաֆիկ: Կատարվել են դիտարկումներ, բացահայտվել են երեխաների մոտ առկա խոսքային խանգարումները և աշխատանքներ են իրականացվել դրանց շտկման ուղղությամբ: Դիտարկումների արդյունքում բացահայտվել է լոգոպեդական միջամտության կարիք ունեցող 15 երեխա /որից 9 տղա, 6 աղջիկ/, կատարվել է խոսքային հետազոտություն, խնդրի

բացահայտում, և ստացել են կարիքին համապատասխան լոգոպեդական աջակցություն, ըստ անհատական պարապմունքների գրաֆիկի: Լոգոպեդի կողմից իրականացվել է շահառուի առաջնային կարիքի գնահատում և ըստ խոսքի ձևավորման մակարդակի աշխատանք է իրականացվել 15 շահառուների հետ, ովքեր ունեն հետևյալ խնդիրը.
-2 երեխա (1 տղա, 1 աղջիկ) ունեն ԽԸԹ-ի I մակարդակ, նրանց մոտ առկա է խոսքային հաղորդակցման միջոցների բացակայություն, կիրառում են հաղորդակցման հարալեզվական ձևեր, արտաբերում են առանձին հնչյուններ, առկա են որոշ բթբթանքային և ճիշտ արտաբերվող բառեր:
**- 6 երեխայի (5տղա, 1 աղջիկ)** հետ, ովքեր ունեն ԽԸԹ-ի III մակարդակ: Երեխաները կիրառում են ընդարձակ նախադասություններ, թեև են տալիս ձևաբանական և շարահյուսական սխալներ, վերջինիս բառերի վանկային կառուցվածքը խանգարված է կամ խանգարված չէ:
-3 երեխա (2տղա 1 աղջիկ), ովքեր ունեն ԽԸԹ-ի IV մակարդակ: Երեխաները ունեն ոչ խիստ արտահայտված ԽԸԹ, դժվարանում են կրկնել բարդ վանկային կառուցվածք ունեցող բառերը, ունեն բառափոխության և բառակազմության դժվարություններ, պատմելիս դժվարանում են պահպանել իրադարձությունների տրամաբանական հաջորդականությունը:
-Աշխատանք է իրականացվել 1 երեխայի (աղջիկ) հետ, ում մոտ ախտորոշվել է սոլեկտիվ մուտիզմ, գերզգայունություն ըստ Արաբկիր ԲՀ-ԵՊԱՒ Արբես ԱԿ-ի կողմից:
**- 3 երեխայի մոտ (2աղջիկ, 1 տղա)** մոտ առկա է ՀԹ, ր, ռ, ս,շ , ց-չ ճ հնչյունի շտկում: Հնչյունային թերզարգացում (ՀԹ)-ը առանձին հնչյունների կամ հնչյունախմբերի խանգարում, որը դրսևորվում է հնչյունների արտաբերման աղավաղմամբ կամ բացակայությամբ:
Հնչյունային թերզարգացումն անվանում են նաև «կոսմետիկական» թերություն, քանի որ այս դեպքում հնչարտաբերման թերությունները չեն ազդում խոսքային լսողության, բառապաշարի, խոսքի քերականական կառուցվածքի, ընթերցանության և գրի վրա: Հնչյունների կամ հնչյունախմբերի արտաբերման խանգարում է, որը դրսևորվում է հնչյունների արտաբերման աղավաղմամբ կամ բացակայությամբ:
Հնչյունների սխալ արտաբերման շտկումն իրականացվել է հետևյալ փուլերով.
- Նախապատրաստական
- Հնչյունի դրում
- Դրված հնչյունի ամրապնդում
- Դրված հնչյունի տարբերակում այլ հնչյուններից

Հնչարտասանության ամրապնդումն իրականացվել է դիդակտիկ խաղերի և վարժությունների միջոցով: Ուսումնասիրվել են երեխաների կարողությունների և հմտությունների զարգացման շարժընթացը: Շահառուների շրջանում խոսքի բառաքերականական կառուցվածքի շտկում կատարվել է հետևյալ ուղղություններով.
- Բառապաշարի հարստացում
- Քերականական սխալների շտկում
- Կապակցված խոսքի զարգացում/ պատմել նկարը. պարզ սյուժե/
- Կազմել պատմություն՝ ըստ նկարների շարքի
- Վերապատմել տեքստը
- Պատմել ինքնուրույն
- Ցուրահատուկ դրսևորումներ խոսքում, էխոլալիայի շտկում
- Խոսքի համապատասխանեցում գործողություններին
- Կարդալու և գրելու հմտությունների զարգացում
- Խոսքի բառաքերականական կառուցվածքը շտկելու նպատակով իրականացվում է հարց ու պատասխան, խաղերի, զրույցի, նկար-քարտերի միջոցով

Լոգոպեդի կողմից խորհրդատվություն երեխաների ծնողների հետ: Կենտրոն հաճախող երեխաների ծնողների հետ մասնագիտական թիմը կազմակերպել է պարբերաբար և ըստ անհրաժեշտության հանդիպումներ, ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբային ձևաչափերով:

Վերահանված խնդիրների համար մշակվել են լուծման ուղիներ, և կազմակերպվել է անհատական աշխատանք աջակցության կարիք ունեցող երեխաների հետ։

Ծնողների հետ համախակի հանդիպումների ընթացքում իրականացվել է խորհրդատվական զրույցներ, տրվել է տարաբնույթ ուղղորդումներ և խորհուրդներ կազմակերպվող աշխատանքի արդյունավետության նպատակով։ Իրականացվել ծնողի հետ և ներկայացվել է երեխայի զարգացման շարժընթացը և դժվարությունները։

*Լոգոպեդական աշխատանքի արդյունքում նկատելի է դարձել երեխաների հաղորդակցման հմտություններ բարելավումը,կապակցված խոսքի զարգացումը, շտկվել են մի շարք հնչյուններ/ր,ռ, ս, շ/, զարգացել է գրավոր խոսքը, ստեղծագործաբար պատմվածքի կազմումը պահպանելով տրամաբանական կապն ու հաջորդականությունը։*

<u>Լոգոպեդի կողմից իրականացված խմբային աշխատանք երեխաների հետ՝ ուղղված խոսքի զարգացմանը։</u> Կենտրոնի լոգոպեդը աշխատել է 2 խմբի հետ։ Խմբերում երեխաների հետ աշխատանք է իրականացվել ուղղված խոսքի ընդհանուր զարգացմանը։ Խմբում ներառվել են նաև երեխաներ, ովքեր չունեն լոգոպեդի միջամտության կարիք, այն նպատակով, որ խումբը լինի ներառական և փոխօգնող։ Խոսքի զարգացման խմբի հիմնական նպատակն է զարգացնել երեխաների բանավոր և գրավոր խոսքը, բարելավվել երեխաների հաղորդակցման հմտությունները։

<u>Առաջին խումբը</u> բաղկացած է եղել 7 երեխայից, որից 6 տղա, 1 աղջիկ։ Խմբի հետ իրականացվել է 17 խմբային հանդիպումներ հետևյալ թեմաներով՝

- ✓ Ծանոթացում
- ✓ Խմբային կանոնների որոշում
- ✓ Բանավոր խոսքի զարգացում
- ✓ Գրավոր խոսքի զարգացում
- ✓ Բառապաշարի հարստացում հարստացման շրջանակներում բառի նպատակային կիրառման կարողության զարգացմանը, բառի փոխաբերական իմաստի, բառի բազմիմաստության ընկալման ձևավորմանը։
- ✓ ԽՀԹ-ի այս մակարդակում աշխատանք է տարվում կապակցված խոսքի զարգացման
- ✓ Երկխոսության խթանում
- ✓ Սյուժետային նկարով պատմվածքի կազմում
- ✓ Սյուժետային նկարների շարքի պատում
- ✓ Տեքստի վերապատմում
- ✓ Ստեղծագործաբար պատմվածքի կազմում

ԽՀԹ-ի այս մակարդակում աշխատանք է տարվե կապակցված խոսքի զարգացմանը ուղղված հետևյալ կերպ.

- ✓ Երկխոսության խթանում
- ✓ Սյուժետային նկարով պատմվածքի կազմում
- ✓ Սյուժետային նկարների շարքի պատմում
- ✓ Տեքստի վերապատմում
- ✓ Ստեղծագործաբար պատմվածքի կազմում

Խմբային աշխատանքների արդյունքում նկատելի է դարձել երեխաների հաղորդակցման հմտություններ բարելավումը, կապակցված խոսքի զարգացումը, գրավոր խոսքի զարգացումը, ստեղծագործաբար պատմվածքի կազմումը։

<u>Երկրորդ խումբը</u> բաղկացած է եղել 8 երեխայից, որից 7 տղա, 1 աղջիկ։ Խոսքի զարգացման խմբի հիմնական նպատակն է զարգացնել երեխաների բանավոր և գրավոր խոսքը, բարելավվել

երեխաների հաղորդակցման հմտությունները: Իրականացվել է 8 խմբային հանդիպումներ հետևյալ թեմաներով՝

- ✓ Գրավոր խոսքի զարգացում
- ✓ Բառապաշարի հարստացում հարստացման շրջանակներում բառի նպատակային կիրառման կարողության զարգացմանը, բառի փոխաբերական իմաստի, բառի բազմիմաստության ընկալման ձևավորմանը:
- ✓ ԽՇԹ-ի այս մակարդակում աշխատանք է տարվում կապակցված խոսքի զարգացման
- ✓ Երկխոսության խթանում
- ✓ Սյուժետային նկարով պատմվածքի կազմում, պատմում
- ✓ Տեքստի վերապատմում
- ✓ Ստեղծագործաբար պատմվածքի կազմում

Խմբային աշխատանքների արդյունքում նկատելի է դարձել երեխաների հաղորդակցման հմտություններ բարելավվումը, կապակցված խոսքի զարգացումը:

Խմբավարի ծառայություն: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 2 խմբակներ:

**Պարի խումբ:** Հաշվետու ժամանակահատվածում պարի խմբին մասնակցել է 12 երեխա, որից 12 աղջիկ: Դասընթացները տեղի են ունենում պարային ստուդիայում՝ շաբաթական երկու օր հաճախականությամբ: Յուրաքանչյուր դասընթաց սկսվել է նախավարժանքով, մարմնի պլաստիկ վարժանքներով: Երեխաները սովորել են տարբեր ժանրերի պարային կատարումներ՝ հայկական, նազանք, չալաստոն, լատինաամերիկյան, վրացական, ռուսական: Հաշվետու ժամանակահատվածում խմբի 9 սաները մասնակցել են Կամուրջ մշակութային կենտրոնի <<Թռիչք>> հանրապետական երրորդ մրցույթին և գրավել են առաջին, երկրորդ, երրորդ հորիզոնականները:

**Անգլերենի խումբ:** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում իրականացվել է Անգլերենի խմբակը՝ <<Կայուն հիմնաքարեր>> սոցիալ-կրթական ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում: Անգլերենի դասընթացները իրականացվում են Օքսֆորդի համալսարանի ուսանողի կողմից՝ կամավոր կերպով և առցանց տարբերակով: Խմբակը իրականացվել է շաբաթական 1 անգամ, 45 րոպե տևողությամբ:
Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է ևս մեկ խումբ, որին ներառված են եղել 5 երեխա՝ 2 աղջիկ, 3 տղա: Երեխաներ սովորել են բառապաշարը զարգացնող անվանումներ:

Ամենօրյա տաք սնունդ կենտրոնում: Հաշվետու ժամանակահատվածում օրեկան կենտրոն է հաճախել 25-35 երեխա և մասնակցել է կենտրոնի կողմից իրականացվող ծառայություններին: Կենտրոն հաճախող յուրաքանչյուր երեխա օգտվել է ամենօրյա տաք սննդից:
Կենտրոնում ճաշը պատրաստվել է կենտրոնի խոհարարի կողմից՝ ըստ նախորոք մշակված ճաշացանկի:

Յուրաքանչյուր ամիս ծառայություններ ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ և նրանց ընտանիքներ՝ նվազագույնը տվյալ ամսում նշված շահառուների թվով:

Հաշվետու ժամանակահատվածում Հայկական Կարիտասի Գավառ <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել 97 երեխայի հետ (որից 48 աղջիկ, 49 տղա):
- Հոկտեմբեր- 85 շահառու

- Նոյեմբեր- 86 շահառու
- Դեկտեմբեր- 86 շահառու

**97 երեխայի հետ (որից՝ 48աղջիկ, 49 տղա)**: Երեխաների տարիքային և սեռային բաժանում՝
- 0-5 տ. -3 երեխա, որից 2 տղա, 1 աղջիկ
- 6-9 տ.- 27 երեխա, որից 17 տղա, 10 աղջիկ
- 10-12 տ.- 38 երեխա, որից 18 տղա, 20 աղջիկ
- 13.18տ.- 29 երեխա, որից 13 տղա, 16աղջիկ

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել 67 ընտանիքի հետ:
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ծառայություններից օգտված շահառուների քանակական տվյալները հետևյալն է.

- **Սոցիալական ծառայություն** - 97 երեխա (որից 48 աղջիկ, 49տղա),
- ✓ *Սոցիալական աշխատող Լիլիթ Ծախբազյանը աշխատել է 25 ծնողի հետ (որից 24 մայր, 1 հայր): և 1 ընտանիքի անդամի ( տատիկ) հետ:*
- ✓ *Սոցիալական աշխատող Նախշուն Գևորգյանը աշխատել է 33 շահառուի հետ, որից՝ 30 մայր 1, հայր 2 տատիկ*
- ✓ *Սոցիալական աշխատող Տաթևիկ Դայրաղյանը աշխատել է 39 շահառուի հետ, որից՝ 35 մայր, 2 հայր, 2 տատիկ*
- Սոցիալ-հոգեբանական համալիր ծառայություն- 1 երեխա (տղա), 2 ծնող (մայր)
- Հոգեբանական ծառայություն– 77 ընտանքի անդամ, 67 ծնող (մայր); 3 հայր, 6 տատիկ, 1 քույր
- Լոգոպեդի ծառայություն -15 երեխա, որից 9 տղա, 6 աղջիկ
- **Տաք սնունդ**- 97 երեխա, որից՝ 48 աղջիկ, 49 տղա
- **Խմբավարի ծառայություն**/- 22 երեխա, որից 14 աղջիկ, 8 տղա
- Պար- 12 երեխա /աղջիկներ/
- Անգլերեն 5 երեխա, որից 2 աղջիկ, 3 տղա

**Շահառուների առնվազն 90% ծնողների ընդգրկվածությամբ՝ կարիքահեն դասընթացներ /ծնողավարման հմտություններ, ֆինանսական միջոցների տնօրինում և այլն/.**

Հաշվետու ժամանակահտվածում մայրեի ինքնաօգնության խմբային հանդիպումներ են իրականցվել կենտրոնի սոցիալական աշխատողների և հոգեբանի կողմից՝ հաշվետու եռամսյակում ընդգրկված շահառու երեխաների ծնողների մասնակցությամբ: Հանդիպումները նվիրված են եղել ծնողավարման հմտությունների զարգացմանը և բռնության կանխարգելմանը:

Մայերի ինքնաօգնության խումբ:Հոգեբանի կողմից իրականացվել է մայրերի ինքնաօգնության խմբի 2 հանդիպում:
1-ին հանդիպմանը մասնակցել են թվով 5 մայր, իսկ երկրորդ խմբին մասնակցել են թվով 12 մայր: Հանդիպումների ընթացքում ստեղծվել է առողջ մթնոլորտ, ծնողները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել, լուրջ մոտեցում ունեցան թեմաներին, թեմայի նպատակին, առաջացած խնդիրներին տվեցին ճիշտ և հասանելի մոտեցումներ, որը արդիական դարձավ մյուսների նկատմամբ, կարողացան մեկը մյուսին ներկայացնելով իր ընտանիքում ճիշտ մեթոդները, որոնք նպաստել էին ընտանիքի և երեխայի մոտ առաջացած խնդիրներին գրագետ լուծումներ տալուն:

**Ծնողավարման հմտությունների զարգացմանը ուղղված դասընթացներ:**
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի սոցիալական աշխատողի և հոգեբանի կողմից խմբային դասընթաց/հանդիպումներ են իրականցվել շահառու ծնողերի հետ «Երեխաների տարիքային զարգացման առանձնահատկություններ» և «Ծնողավարման

հմտություններ» թեմաներով:Հանդիպումները իրականացվել են 1 խմբով, դասընթացներին մասնակցել են ընդհանուր թվով՝ 11 ծնող՝ մայր:

Ծնողների կողմից լրացվել են նախնական և վերջնական հարցաթերթեր, որի միջոցով սոցիալական աշխատողները չափել են նրանց ձեռք բերած գիտելիքները:
Հանդիպումների ընթացքում իրականացվել են հետևյալ թեմաներով դասընթացները՝

- ☐ «Երեխաների տարիքային զարգացման առանձնահատկություններ» և «Ծնողավարման հմտություններ» խորագիրը կրող 1-ին հանդիպման ընթացքում քննարկվել է 3 տարեկանի և 6-ից 7 տարեկանի ճգնաժամի մասին: Հանդիպման սկզբում տեղի է ունեցել խաղ վարժանք ուղղված մասնակիցների ծանոթացմանը, այնուհետև տեղի է ունեցել դասընթացի ակնկալիքների, սպասելիքների քննարկում և ներկայացում, նախաթեստերի լրացում: Իրականացվել է <<Ծնողական շարադրանք>> մեթոդիկան, որի ընթացքում ծնողները 4-ից 5 նախադասությամբ ներկայացրել են իրենց երեխաներին: Տեղի է ունեցել դեպքի քննարկում 3 տարեկան երեխայի կամակոր պահվածքի վերաբերյալ, այնուհետև անդրադարձ է կատարվել տեսական մասին, ներկայացնելով 3 տարեկանի ճգնաժամի ընդհանուր բնութագիրը, ծնողներին տրամադրվել են գործնական խորհուրդներ տեղի է ունեցել դեպքերի քննարկումներ, դերային խաղ, նկարի վերլուծություն: Հանդիպման երկրորդ հատվածում ներկայացվել է 6-ից 7 տարեկանի ճգնաժամի ընդհանուր բնութագիրը, առաջնային գործունեությունները, նորագոյացությունները, տրամադրվել են գործնական խորհուրդներ, կարևորվել է հատկապես ծնող-մասնագետ համագործակցության դերը: Տեղի է ունեցել 6-ից 7 տարեկանին բնորոշ իրավիճակների քննարկումներ, վերլուծություններ: Ընդհանուր հանդիպումը ունեցել է ինտերակտիվ բնույթ՝ ընթացքում ծնողները ներկայացրել և կիսվել են իրենց փորձով միմյանց տալով նաև խորհուրդներ: Հանդիպման ավարտին իրականացվել է վարժանք <<Հետ հայցք դեպի մանկություն>>:
- ☐ <<Դեռահասության առանձնահատկությունները, Դաստիարակության ոճեր>>: Դասընթացի սկզբում տեղի է ունեցել դերային խաղ, որի ընթացքում ներկայացվել է դեռահասությանը բնորոշ իրավիճակ: Դերային խաղի ավարտից հետո մասնակիցները վերլուծել են իրավիճակը տարբեր տեսանկյուններից՝ դեռահաս, ծնող, մասնագետ, հանդիսատես: Այնուհետև ներկայացվել է դեռահասության գլխավոր ներագոյացությունները, առանձնահատկությունները: Առանձնահատուկ շեշտադրվել են սեռական հետաքրքրությունները դեռահասության շրջանում, դրանից առաջացող խնդիրները: Քննարկվել են դեռահասությանը բնորոշ հուզական վիճակները, տարիքային հիմնահարցերը, որոնք առաջնային են դառնում տվյալ տարիքային շրջանում, այնուհետև քննարկվել են թե ինչպես է պետք արձագանքել դեռահասների վարքին, ծնողները կիսվել են իրենց փորձով և այդ շրջանում առաջացած խնդիրներով: Հանդիպման երկրորդ հատվածը ուղղված է եղել ծնողի կողմից կիրառվող դաստիարակության ոճերին: Ծնողներին ներկայացվել է դաստիարակության 4 ոճերը դրանց առանձնահատկությունները, հետևանքները երեխայի անձի զարգացման վրա: Այնուհետև ծնողները ներկայացրել են թե, իրենք ինչպիսի ոճ են կիրառում իրենց երեխաների նկատմամբ: Քննարկվել են իրավիճակներ, որոնց ընթացքում ծնողները ներկայացրել են 4 ոճերի կիրառման հետևանքները տվյալ իրավիճակներում:
- ☐ <<Ծնող երեխա համատեղ ժամանց>> և դասընթացների ամփոփում: Հանդիպման ընթացքում տեղի է ունեցել ծնող-երեխա համատեղ ժամանցին նվիրված տեսահոլովակների դիտում քննարկում, այնուհետև յուրաքանչյուր ծնող ներկայացրել է թե ինչպես է անցկացնում ժամանցը իր երեխայի հետ: Քննարկվել են թե որքանով իրականացան իրենց սպասելիքները դասընթացի ավարտին, ներկայացրեցել են ներկայիս հուզական վիճակը: Իրականացվել է խաղ վարժանք, մասնակիցներին բաժանվել են A4 թղթեր, որոնց վրա պատկերված են եղել երկու շրջանակներ, ըստ նշված դրդումների մասնակիցները պատկերել են հիստոգրամներ,

որտեղ արտահայտել են, մեկ օրվա՝ 24 ժամվա ընթացքում տոկոսային մոտավոր հարաբերակցությամբ, յուրաքանչյուրը որքան ժամանակ է հատկացնում նշված ոլորտներից յուրաքանչյուրին: Առաջին շրջանակում պատկերել են իրենց առօրյա, իսկ երկրորդում՝ իդեալական, ցանկալի տարբերակը:Այնուհետև շեշտադրվել է այն, որ ծնողը նախ անձ է, ով ունի բազում հետաքրքրություններ, ցանկություններ, արժեքներ, դիրքորոշումներ, և չնայած այս հանդիպումներին շեշտը դրվել է ծնող երեխա հարաբերություններին, սակայն յուրաքանչյուրը ինքնաիրացված է իր կողմից ծավալված բոլոր ոլորտներում, արդյունավետ ծնողը նա է, ով համեմատաբար կայացած է կյանքի բոլոր ոլորտներում, ով ժամանակ առ ժամանակ լիցքաթափվում է, ով մասնագիտական մեծ աճ է գրանցում, ով հաջողում է ծնող-երեխա փոխհարաբերություններում:

<<Ոչ բռնությանը>> և <<Պաշտպանողական վարքագծի գործառույթները>> թեմայով իրազեկող և կանխարգելիչ հանդիպումներ, միջոցառումներ ծրագրի շահառու ծնողների հետ:
Հանդիպմանը ներկա են գտնվել 23 ծնող, որից 22 մայր, 1 հայր՝ 2 հանդիպումների ընթացքում: Թեմատիկ հանդիպումները իրականացվել են կենտրոնի համակարգողի և սոցիալական աշխատողի կողմից:
Հանդիպման ընթացքում ներկայացվել են հետևյալ թեմաները՝

- ✓ Բռնության տեսակների ներկայացում, քննարկվել են բռնության փոխարեն կիրառվող այլընտրանքային տարբերակներ, տեղի է ունեցել իրավիճակների ներկայացում և քննարկում տարբեր տեսանկյուններից: Ներկայացվել են հոգեբանական, սեռական, տնտեսական, ֆիզիկական, անտեսման բռնության/չարաշահման տեսակները ու դրանց կանխարգելման միջոցները, ինչպես նաև մասնակիցները իրազեկվել են կիբեր հափշտակիչների մասին: Ծնողներին նաև ներկայացվել են բռնության չափման ցուցանիշները ըստ տեսակների: Ներկայացվել են բռնությանը արձագանքման փուլերը, քննարկվել են բռնության իրական դեպքեր և ներկայացվել են բողոքարկման մեխանիզմները: Հանդիպման մասնակից ծնողները նաև իրազեկվել են Հայկական Կարիտասի պաշտպանության քաղաքականությանը և բողոքարկման մեխանիզմներին:
- ✓ Ծնողներին ներկայացվել է պաշտպանական վարքագծի գործընկերությունները: Քննարկվել են վաղ արձագանքման նշանները՝ թե ինչպես է մեր մարմինը տեղեկացնում մեզ, որ ինչ-որ բան այն չէ:
- ✓ Անձի անձնական տարածքի և հանրային ու անձնական իրերի տարբերակումը:
- ✓ Հատուկ կարիքներ ունեցող երեխաների անվտանգությունը համայնքում և որոշ վիճակագրական տվյալներ:
- ✓ Գաղտնիքներ: Վտանգավոր և ապահով կամ անվտանգ գաղտնիքների տարբերությունը և դրանց կարևորումը՝ ի նպաստ երեխայի լավագույն շահի:
- ✓ Իրավունքների և ցանկությունների տարբերակում:
- ✓ Զգացմունքների տեսակները և դրանց տարբերակումը:
- ✓ Ծնողներին ներկայացվել է խաղ-վարժանք, որի միջոցով կարող են պատկերացում կազմել իրենց երեխայի ապահովության ցանցի մասին՝ ինչպիսին է ում է երեխան վստահում, հավատում, ապավինում:

*Հանդիպման արդյունքում ծնողները իրազեկվեցին բռնության տեսակների մասին, տեղեկացան, որ երեխաների պաշտպանությունը յուրաքանչյուրի պարտավորությունն է և, որ անվտանգ զգալու իրավունքը դա մարդկային իրավունք է և պատկանում է յուրաքանչյուր մարդու:*

**Ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված հաշմանդամություն ունեցող երեխաներ**

Ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված են եղել 22 երեխա, ովքեր ունեն հատուկ կարիքներ, ինչպիսիք են՝

- *Սելեկտիվ մուտիզմ, գերզգայունություն* - 1 աղջիկ
- *Ինտելեկտուալ հապաղում, մանկական տարիքի էնցեֆալոպաթիա, վարքային խանգարում*- 1 տղա
- *Լեզվական խնդիրներ*- 7 երեխա, որից 2 աղջիկ, 5 տղա
- *Վարքերական հիվանդություն* –1 աղջիկ, 1 տղա
- *Քրոնիկ գաստրիտ*- 1 աղջիկ
- *Հեռատեսություն* - 1 տղա
- *Հիպերմետրոպիա, համագործակցվող շլություն*-1 աղջիկ
- *Անբավարար փարթամություն*- 1 տղա
- *Թեթև մտավոր հետամնացություն*-2 տղա
- *Չափավոր մտավոր հետամնացություն, վարքային խանգարումներ ԿՆՀ.ոեզ-օրգ., ախտահարման ֆոնի վրա* -1 տղա
- *Հոգեխոսքային զարգացման հապաղում, աուտիստիկ սիմպտոմատիկայով*-4 երեխա/ 3 տղա, 1 աղջիկ

**Ծառայություններից օգտվող վարքային խնդիրներ ունեցող** երեխաների

Վարքային խնդիրներ ունեցող 4 երեխաները/ տղա/ հաշվետու ժամանակահատվածում ներգրավված են եղել կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններում:

**Անձնական օգնականի աջակցությունից օգտվող երեխաներ:**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի շահառու 6 երեխա/ 5տղա, 1 աղջիկ/ օգտվել են անձնական օգնականի ծառայությունից: Վերջիններս ունեցել են հետևյալ խնդիրները՝

- *Ինտելեկտուալ հապաղում*
- *վարքային խանգարում*
- *Աուտիզմ*
- *Հոգեխոսքային զարգացման հապաղում*

Անձնական օգնականը նպաստել է շահառուների ազատ ապրելու և ներառվելու իրավունքի իրացմանը՝ օգտագործելով սեփական կարողությունները, սոցիալական և հոգեբանական աշխատանքի արդյունքում ձեռքբերված գիտելիքները, կարողությունները, հմտությունները:

**Տրամադրված ծառայությունների արդյունքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների վիճակի մեղմում (առնվազն 60% շահառուների դեպքում) և դժվարին իրավիճակի ամբողջական հաղթահարում (առնվազն 40% շահառուների դեպքում):**

Իրականացվել է հարցում կենտրոնի շահառու ծնողների շրջանում: Հարցաթերթիկը կազմվել է կենտրոնի բազմամասնագիտական թիմի կողմից:

Հարցմանը մասնակցած ծնողների 42%-ը նշել է, որ կենտրոնում մատուցված ծառայություններից օգտվելու արդյունքում տեղի է ունեցել նրանց ընտանիքների դժվարին իրավիճակի մեղմում, իսկ 58%-ը նշել է, որ տեղի է ունեցել դժվարին իրավիճակի ամբողջական հաղթահարում:

**Կազմակերպության կողմից՝ ծառայություններ ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների առնվազն 90%-ի բավարարվածություն մատուցված ծառայություններից:**

Իրականացվել է հարցում շահառու ծնողների և երեխաների շրջանում: Հարցաթերթը կազմվել է կենտրոնի բազմամասնագիտական թիմի կողմից

Հարցմանը մասնակցած ծնողների 98%-ը բավարարված են կենտրոնի մատուցած ծառայություններից:

Հարցմանը մասնակցած երեխաների 100%-ը բավարարված են կենտրոնում մատուցված ծառայություններից:

**Ծառայությունում ընդգրկված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների անհատական սոցիալական ծրագրեր:**

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են ԱՍԾ-ներ 12 երեխայի համար և ըստ պլանավորման երեխաներին մատուցվում են կենտրոնի ծառայությունները:

Թարմացվել են ԱՍԾ-ներ 85 երեխայի համար:

**Այլ միջոցառումներ/գործողություններ**

Անձնակազմի մասնակցություն դասընթացների/ վերապատրաստումների/ քննարկումների հաշվետու ժամանակահատվածում:

- Ս/թ դեկտեմբերի 13-ին կենտրոնի համակարգողը և սոցիալական աշխատողները մասնակցել են <<Կրթական ոլորտի պատասխանատուների, դասավանդող մասնագետների և հացեատերերի փոխադարձ ակնկալիքները>> թեմայով քննարկմանը, որը իրականացվել է Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Գեղարքունիքի մասնաճյուղի կողմից:
- Ս/թ նոյեմբերի 22-ին, կենտրոնի սոցիալական աշխատողները մասնակցել են "Ավելին, քան մեկ պատմություն" թիմակառույց խաղ-գործիքի ներկայացմանը, որը իրականացվել է "Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն" ՀԿ-ի կողմից Գավառի Ռեսթարթ Երիտասարդական կենտրոնում: Թիմակառույց խաղ-գործիքը նաև տրամադրվել է կենտրոնին: Խաղի մասին տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ More than one story/Ավելին, քան մեկ պատմություն - YCCD
- Ս/թ նոյեմբերի 12-15-ը կենտրոնի համակարգողը մասնակցել է <<Դաշտապանողական վարքագիծ>> թեմայով վերապատրաստմանը, որը իրականացվել է Հայկական Կարիտասի կողմից:
- Ս/թ նոյեմբերի 7-ին կենտրոնի սոցիալական աշխատողները մասնակցել են Հայկական Կարիտասի կողմից մշակվող <<Ծնողավարման մոդուլի>> քննարկմանը:
- Ս/թ նոյեմբերի 1-ին Հայկական Կարիտասի Գավառի ՕԴ կենտրոնի և «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան, որակյալ կրթության կայացմանը» ծրագրի բազմամասնագիտական թիմերը համատեղ քննարկում ունեցան ներառական բնույթի համայքային միջոցառման իրականացման համար:
- Ս/թ հոկտեմբերի 2-ին Գավառի ուսուցողական կենտրոնում հյուրընկալվել է Նարեկ Դուրյանը: Հանդիպմանը մասնակցել է կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Դարադյանը:
- Ս/թ հոկտոմբերի 2-3-ը կենտրոնի համակարգողը մասնակցել է «Սոցիալական համերաշխության տնտեսություն և համայնքի ներգրավում» թեմայով երկօրյա աշխատարանին, որը կազմակերպվել էր «Հայկական Կարիտաս»-ի «Սոցիալական տնտեսության հզորացում» ծրագրի շրջանակում:
- Ս/թ հոկտոմբերի 16-ին կենտրոնի թիմը /համակարգող, սոցիալական աշխատողներ, հոգեբան, լոգոպեդ, տնտեսուհի, խոհարար/ մասնակցել են << Հաշմանդամության տեսակները>> թեմայով դասընթացին, որը կազմակերպվել է Հայկական Կարիտասի

«Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան, որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակներում:

*Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի համակարգողը անձնակազմի հետ պարբերաբար թիմային քննարկում/հանդիպումներ է իրականացրել հետևյալ թեմաներով՝*

- Հաշվետու ժամանակահատվածում գործողությունների քննարկում և պլանավորում
- Ընթացիկ աշխատանքների պլանավորում և վերապլանավորում
- Սոցիալական-կրթական միջոցառումների իրականացման պլանավորում
- Տնայցերի և դպրոցայցերի ժամագրաֆիկի կազմում և քննարկում
- Ընտանիքի առաջնային գնահատման կարիքների և ընդգրկվող դեպքերի քննարկում
- Դեպքերի քննարկում և վերաբաշխում
- Կենտրոնի սոցիալական աշխատողների և հոգեբանի կողմից իրականացվող թիրախ խմբային աշխատանքների արդյունքների քննարկում, վերապլանավորում
- Շահագրգիռ կառույցների հետ աշխատանքի պլանավորում
- Երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավի պլանավորում
- Համայնքային ներառական միջոցառման պլանավորում
- «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան, որակյալ կրթության կայացմանը» ծրագրային թիմի հետ համատեղ քննարկում՝ Համայնքային ներառական միջոցառման կազմակերպման նպատակով
- Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվող միջոցառումների վերապլանավորում

<u>Աշխատանք համագործակից կառույցների հետ:</u> Հաշվետու ժամանակահատվածում դեպքերի վարման նպատակով կենտրոնը ակտիվորեն համագործակցել է հետևյալ շահագրգիռ կառույցների հետ՝

- Գավառի Համայնքապետարան
- ՄՍԾ Գավառի տարածքային կենտրոն
- ՀՀ ՍԻՊ աշխատակազմի գրասենյակ
- Սախարովի անվան Մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ, Գեղարքունիքի մ/ճ
- Յունիսեֆ Հայաստան
- Գավառի Ուսուցողական կենտրոն
- Արաբկիր ԲՀ-ԵՂԱԻ Երեխայի զարգացման և վերականգնողական կենտրոնի (ԵԶՎԿ) Գավառի մասնաճյուղի
- Ջինիշյան Հիշատակի հիմնադրամ
- Ռեսքարթ ԵՀԿ
- Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն ՀԿ

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացի՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների՝ նշելով Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունները հասանելի են, շահառու երեխաները սոցիալապես ակտիվ են, ընդգրկված են համայնքային կյանքում, զգալիորեն բարելավված է նրանց կյանքի հմտությունների որակը:
Բոլոր շահառուների հետ կնքվել են սոցիալական բնույթի եռակողմ (՞) փոխհամաձայնության պայմանագրեր և կազմվել են ԱՍԾ-ներ:
Երեխաները և նրանց ընտանիքի անդամները ակտիվորեն ներգրավվելով ծառայություններում ձեռք են բերել վստահություն կառույցի և մասնագիտական թիմի նկատմամբ, ինչը հիմք է հանդիսացել անահատական դեպքերի վարմանը և հաջողությունների արձանագրմանը:
Շահառու ծնողներին ներկայացվել է Հայկական Կարիտասի անվտանգության քաղաքականությունը և նրանք մշտապես ազատ կարողացել են արտահայտել իրենց կարծիքը և միտքը կենտրոնի կողմից իրականացվող ծառայությունների վերաբերյալ:
Սույն հաշվետվության մեջ նկարագրված բոլոր գործողությունները նպաստել են երեխաների սոցիալական ներառմանը, նրանց ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողությունների ու կյանքի հիմնական հմտությունների զարգացմանը: Կենտրոնի կողմից տրամադրված ծառայությունների արդյունքում երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրվել են սոցիալ-վերականգնողական խորհրդատվություն և աջակցություն, որը խթանել է երեխաների սոցիալական, կրթական, առողջապահական և ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխել է նրանց սոցիալական մեկուսացումը:
Սոցիալական աշխատողների և հոգեբանի կողմից իրականացվող խմբային աշխատանքներում ներգրավվածությունը նպաստել է երեխաների փափուկ հմտությունների, հաղորդակցման և բանակցային հմտությունների զարգացմանը, երեխաները կարողանում են հաղորդակցվել կոնֆլիկտային իրավիճակներում գործադրելով խոսքային հմտություններ և բացառելով ֆիզիկական ուժը, նրանք ձեռք են բերել առաջնորդական հմտություններ, տիրապետում են մեդիագրագիտության որոշ կանոնների:
Արտ թերապիայի շնորհիվ երեխաների ստեղծարար միտքը զարգացել է, թերապիաները նպաստել են վերջիններիս հոգեբանական խնդիրների հաղթահարմանը: Կենտրոնում երեխաները օգտվել են լոգոպեդի ծառայությունից և հաշվետու ժամանակահատվածում բուն մասնագետի դիտարկման առկա է դրական առաջընթաց:
Պարի խմբակը նպաստել է երեխաների սոցիալականացմանը, առողջ կենսակերպին և պարային հմտությունների յուրացմանը: Անգլերենի խումբը նպաստել է երեխաների բառապաշարի զարգացմանը:
Կենտրոնում տրամադրվող տաք սնունդը երեխաների համար ևս ունի կենսական նշանակություն, քանի որ դպրոցից անմիջապես հետո նրանք կենտրոն են հաճախում ու սննդային ընդմիջումից հետո երեխաները կարողանում են էներգիայով լեցուն մասնակցել հետագա գործողություններին: Շատ երեխաների համար սնունդը մեծ նշանակություն ունի քանի որ տանը այս կարիքը շատ խորն է՝ հիմնված սոցիալական դժվարին պայմաններից:
Արցախից տեղահանված ընտանիքի երեխաները ադապտացվել են միջավայրին, կենտրոնում իրենց ապահով են զգում:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

☐ Հաշվետու ժամանակահատվածում խոչընդոտներ չեն գրանցվել:
Անձնակազմի մասնակցություն դասընթացների, վերապատրաստումների՝
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02mDV5ecdYPSgfiwXTC5zxdKVzRcNDexJW3V7tjoxpb7UvNrBV3w4chxzjhG13GAl

https://www.facebook.com/kyavartvcompany/videos/810443930634277З

☐ Հանդիպում ՀՀ Վաստակավոր արտիստուհի Բյուրեղիկ Մնեյանի հետ՝ https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0MgFu3GtoYU3YEyDubqkPvg3cl1F2p8MXIkk44UdCXyYRC8z1A92bBJfMmQRHKymul

☐ Հանդիպում Չինիցյան հիշատակի հիմնադրամի Գավառի շախմատ. դպրոցների ԱԽ (աշակերտական խորհուրդների) անդամները https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02vRN9Kzo8SzKxHg7Sx5gryYxFWLpPxWlekC3VsRjzVNVG7muyKa1hdX5vTchrXbdl&id=100094690401356

☐ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների շրջանակներում, Հայկական Կարիտասի Գավառի «Փոքրիկ Իշխան» երեխաների խնամքի ցերեկային կենտրոնի և «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագրի համատեղ ջանքերով իրականացվեց Համայնքային ներառական միջոցառում՝ երեխաների իրավունքների կոնվենցիայի և ներառականության վերաբերյալ https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0xDWRPz516gmP8m6AV9WoiDB6LAY5hQkM22traDwcpv5oj4vtyfbEvpmimRwp55hl

☐ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների շրջանակներում, Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնի սաները փազլների միջոցով իրազեկվում են ՄԱԿ-ի կողմից ընդունված երեխաների իրավունքների մասին կոնվենցիային: https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/222229052813514?

☐ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների շրջանակներում, Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնի սաների համար իրականացվող երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանը ուղղված տարաբնույթ իրազեկիչ տեղեկատվական հանդիպումներ, ակցիաներ և քննարկումներ https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0JMWbxjrcSeLCH37r87aj9caH9Nz7dKRdqpeyQbhrLJs4jQMTRW1YsPwxMip47vYHl

☐ Պարի խմբակի վերաբերյալ լուսաբանումները հասանելի են հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/profile.php?id=100067178295375

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում խոչընդոտներ չեն գրանցվել:
Դեպքերի վարման ընթացքում առաջացած դժվարությունների դեպքում ինտերվիզիա է կազմակերպվել:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

- Ս/թ նոյեմբերի 20-ին, Ջինիշյան հիշատակի հիմնադրամի Գավառի շահառու դպրոցների ԱԽ (աշակերտական խորհուրդների) անդամները հանդիպում ունեցան «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Գավառի «Փոքրիկ Իշխան» սոցիալական կենտրոնի համակարգողի և սոցիալական աշխատողի հետ: Հանդիպման ընթացքում կենտրոնի համակարգողը ներկայացրեցին կենտրոնի գործունեությունն ու իրականացվող ծրագրերը: Հաջորդիվ աշակերտական խորհրդի անդամները ներկայացրեցին իրենց կողմից մշակված նախագծային գաղափարները և խորհրդատվություն ստացան կենտրոնի մասնագետների կողմից:
  Հանդիպման արդյունքում նախանշվեցին հնարավոր համագործակցության եզրեր Փոքրիկ իշխան կենտրոնի, Ջինիշյան հիշատակի հիմնադրամի, Գեղարքունիքի, Ծաղկաշենի, Գանձակի N1, Կարմիրգյուղի N1 և Ծովազարդի միջնակարգ դպրոցների միջև:
  Հանդիպմանը մասնակցեին 20 երեխաներ, որից 3 տղա, 17 աղջիկ: Նշված 20 երեխաներից 7-ը հանդիսանում են Փոքրիկ Իշխան կենտրոնի սաներ և հանդիպումը վերջիններիս համար կրում էր տեղեկատվական, փորձի փոխանակման բնույթ:

- Ս/թ նոյեմբերի 8-ին, Հայկական Կարիտասի Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնում հյուրընկալվեց Բյուրեղիկ Մնեյանը՝ ՀՀ վաստակավոր արտիստուհի, «Նռանէ» մանկապատանեկան թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամ, Կալիֆորնիայի հայ գրողների միության պատվավոր անդամ, Երգիծաբանների համահայկական միության անդամ, հայ դրամատուրգների միության անդամ, Հայաստանի մշակույթի գործիչների միության պատվավոր անդամ, Հյուսիսային Ամերիկայի գրողների միության անդամ, Գավառի Լևոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնի վաստակավոր դերասանուհի:
  Տիկին Բյուրեղիկ Մնեյանը կենտրոնի երեխաներին ներկայացրեց իր ստեղծագործական ուղին, կիսվեց իր փորձով և մասնագիտական հաջողություններով:
  Հանդիպմանը մասնակցել է 16 երեխա, որից՝ 10 տղա, 6 աղջիկ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար Ս. Մուրադյան

_______________________
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
Գործադիր տնօրեն Գ. Տարասյան

_______________________
(ստորագրություն)

Կ.Տ.